

T'eop'ile kam Pzti cgnawor : Matenasar Mankanc'9

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

T'eop'ile kam Pzti cgnawor : Matenasar Mankanc'9. 1897.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.


7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

1318

Ի Լ Է

Կ Ա Մ

Պ Զ Տ Ի Ճ Գ Ն Ա. Ի Ո Ր




Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ս Ո Ի Ր Բ Ղ Ա Զ Ա Ր

1897






Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն

Մ Ա Ն Կ Ա Ն Ց



9


Թ Է Ո Փ Ի Լ Է



ԹԷՈՓԻԼԷ

Կ Ա Մ

ՊԶՏԻ ՃԳՆԱԻՈՐ




ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1897

2008-152777





OFFICE OF THE SECRETARY OF THE ARMY

WASHINGTON, D. C.

U. S. GOVERNMENT PRINTING OFFICE



Sept 25 .

ՊԶՏԻ

Ճ Գ Ն Ա Ի Ո Ր



ԳԼՈՒԽ Ա

Ծախռն Զարկոսրդոսրիւնն .

ԱՆՏԱԾ գարունն մէջ ծովու մօտ տեղ
մը կը բնակէր Փիլիպպոս անունով կո-
ղով շինող մը : Աս խոհեմ ու բարե-
պաշտ մարդը հինգ դաւակ ունէր , որոնց
մէջը թէոսիլէն կրակոտ ու անհան-
գարտ աղայ մը ըլլալուն՝ ծնողքը շատ կը
վախնային որ ետքը գլխընուն փորձանք
մը չբերէ : Անոր համար Փիլիպպոս մէկ
կողմէն կ'աշխատէր իր ընտանիքը պա-

հելու, մէկալ կողմէն ալ կը ջանար
տղաքը աղէկ կրթելու: Քանի որ կը
մեծնային, անոնց խելւքնին բանալու
տարիքներնուն յարմար բաներ կը սոր-
վեցընէր. մէկ հասիկ հոգը ան էր որ,
ատենօք իր տղաքը բարեպաշտ ու բանի
գործքի տէր մարդիկ ըլլան:

Սիրար կը բացուէր երբ կը տեսնար
որ իր մանչերը ձեռքերնէն եկածին
չափ իրեն կ'օգնէն. աղջիկներն ալ
իրենց մօրը հետ տանը բաները կը հո-
գան, որով ամենեւին դրսէն մարդու կա-
րօտութիւն չունեցաւ. մանաւանդ թէ՛
ինքը երբոր ատեն աւելցընէր, կ'եր-
թար ան գեղին ձկնորսին օգնելու. ու
իր աշխատանքին վարձքը առած կը
դառնար: Աս ձկնորսը որուն անունն
էր Թոմաս՝ Թէօփիլէին կնքահայրն էր,
զինքը շատ կը սիրէր և ունեւոր ըլլալով
լաւ կը հագար:

Թէօփիլէն իրաւ կըրնար աղէկ աշխա-
տիլ, շարասիրտ չէր, ու իր ծնողքը շատ
կը սիրէր, բայց շատ պակասութիւններ
ալ ունէր. կ'ուզէր որ միշտ իր խօսքը
ու կամքը առաջ երթայ. իր պակաս-
թիւնները չճանչնալով ինչուան որ փո-
սի մը մէջ ճեյնար, ուրիշի իրատի հե-
տեիլ չէր ուզէր: Շատ հեղ պէտք եղաւ

որ ծնողքը զինքը պատժեն. ինքը կը
խտատանար որ մէյմ' ալ չընէ իր յան-
ցանքները, ու երկու օր չանցած նորէն
նոյն պակասութիւնները կ'ընէր : Եղբայր-
ները ու քուրերը հանգիստ չէր թու-
ղուր. պզտի բանի մը համար կը կուը-
տէր, կը դարնէր կը փեռտէր զանոնք :
Ասկէ ի դատ քիչ մըն ալ որկրամուլ էր .
երբօր Թոմասին առնը կերակուրի կը
կանչուէր, իր առնը դարձածին պէս
կը սկսէր հոն կերածներուն վրայ խօսիլ,
գիմացի դրածներուն չհաւնիլ :

Մայրը առ անկարգութիւնները տես-
նալով, Ա' ի՞նչ բան է, կ'ըսէր. քրիստո-
նէ ազու մը կը վայլէ՞ սսոնք. անդա-
դար կը խրատէր, կը յորդորէր, ու
աս ալ կ'ըսէր որ Ասանկ երթալով վեր-
ջէն ալ մեծ պակասութիւններու մէջ կ'ը-
նաս. և տեսնալով որ ազան միշտ իր
բռնած ջուրը կ'երթայ, ինքնիրեն ե-
ղած ատենը կուշար : Ասանկ ալ Փիլիպ-
պոս չէր գաղթեր անոր անկարգութեա-
նը վտանգները աչքին գիմացը դնելէն :
Թոմաս իր կողմէն շատ հեղ խրատէլէն
ի դատ, օր մը ըսաւ անոր. Նսյոյս ու-
նէի որ դու խեղացի աղա, մը ըլլաս, ու
գքեղ ինձի ժառանգ ընեմ. բայց ա-
տանկ անկարգ ազան ես իմ քովս չեմ

առնելը, քու տեղի քու եղբայրներէդ
մէկը ինձի որդեգիր կ'ընեմ: Ահ, շատ
կը վախնամ որ Աստուած զքեզ աս
ճամբէն ետ դարձնելու համար՝ օր մը
մեծ փորձանքի մը մէջ ձգէ. իրաւ որ իմ
սիրտս չի գիմանար, բայց պիտի ուրա-
խանամ ան առնելը, թէ որ անով խեղճ
գլուխդ գայ:

Բայց թէ ուրիշն այնչափ յամառ էր,
որ երբ 13 տարուան առջի անգամ սըր-
բու թիւն առնելու պատրաստուեցաւ,
գեղին աւագերէցը զինքը վանտեց. ա-
սիկայ վարքը շակեղուն տեղ, անհող կե-
ցաւ, անոր համար ալ Աստուծոյ շնորհ-
քէն զրկուեցաւ. վասն զի ան որ իր մե-
ծերուն ու իր ծնողացը խրատը շառնելը
չպահէր, Աստուած ինչպէս անոր իր
շնորհքները տայ:

Ծովեղերքէն քիչ մը հեռու գեղին
գիմացը սղախի կղզի մը կար, տեսակ
տեսակ ծառերով զարդարած, հեռուէն
շատ աղուոր կ'երևար. բայց կղզիին մէջ
անուշ ջուր չըլլալուն, մարդ չէր բնա-
կէր հոն: Փիլիպպոս ամիսը կամ երկու
ամիսը հեղ մը թամասէն նաւակը կ'առ-
նէր, կ'երթար ան կղզին ուսի ճիւղ կը ա-
րելու, հեան ալ իր աղոցմէն մէկը կամ
երկուքը կը տանէր, որ շատ կ'ուրախա-

նային: Անգամ մըն ալ սեպտեմբեր ամ-
սուն մէջ մէկ պայծառ իրիկուն մը, որ
ծովն ալ շատ հանգարա էր, Փիլիպպոս
ըսաւ Թէոփիլէին որ պատրաստ ըլլայ
վաղը առտու իր հետը գալու: Թէոփիլէն
շատ շնորհակալ ըլլալով խոստացաւ իր
հօրը որ երկրորդ օրը կանուխ ելլայ.
ն արեւը չծագած ինքը պատրաստուեր
էր ճամբայ ելլալու: Ան օրը ատեն չու-
նեցաւ մէկուն մէկալին հետ կուրտե-
լու. հօրը առած բաները նաւակը առ-
նելու ատեն սրախու թէնէն ծանրու-
թիւն չէր խմանար: Փիլիպպոս սովորու-
թիւն ըրեր էր՝ որ ամէն անգամ հետը
տանի մէկ բանի օրուան պաշար ու հար-
կաւոր գործ իքներ, վասն զի մէկ անգամ
մը հով ելլալով, հոն կղզիին մէջ բռնը-
ւեր էր իր մէկ աղովը, ու հետերնին ու-
տելիք չբերելուն՝ քիչ մնացեր էր որ
անօթ ու թէնէ մեռնին:

Աս անգամուս ալ ճամբայ ելլալու ա-
տեն Թէոփիլէին մայրը պատրաստեց
առաւ անոնց երկու մեծ հաց, կարագ
ու պանիր, չոր միս, խաչկին մը, աղ,
ու հողէ ամանով անուշ շուր. վերջը Փի-
լիպպոսի բրդէ շինած նոր վերարկուն ալ
առաւ որ եթէ գիշեր ատեն գուրս մնա-
լու ըլլան վրանին առնեն, ասանկ ալ հե-

տերնին առին կրակ վառելու համար
գայլախազը, ծծուկը, բանկյւնելիքը •
գանակ, գամեր, չուտններ, և ուրիշ
մանր մուշր գործիքներ : Աերջը բարե
տուին ճամբայ ելլողները իրենց անե-
ցոյը • Թէօփիլէն հօրը հրամանովը քա-
նի մը կողով հետը առած մաաւնաւակը •
Փիլիպպոս թի կը քաշէր, և սկսան ցա-
մաքէն հեռանալ • քնատնիքը իրենց բարի
ճամբայ, և բարով գառնաք կ'ըսէին, ու
կը նայէին՝ ինչուան որ աչքէ կորուսին :
Ճամբորդու թիւննին շատ յաշոյ եղաւ :
Թէօփիլէն հօրը հետ բոլոր ուժովը թի
կը քաշէր • արեւը նոր ծագած հասան
կղզին, ելան նաւակէն մէկ պղտի ծո-
վածոց մը : Փիլիպպոս կապեց նաւակը
ուռի ծառի մը, նստեցան ծովին քով •
կաոր մը հաց ու միս կերան, ու քիչ մը
ուժ աւնեղէն վերջը, սկսան իրենց աշ-
խատութիւնը : Հայրը ելաւ ծառի մը
մրայ ու ճիւղերը կը կտրէր • Թէօփիլէն
ալ մէկէն ժողվելով, կապոց կապոց շի-
նելով կը կրէր նաւակին մէջ, այնպէս
կը շարէր որ շատ տեղ չի բռնէն : Ա-
ռաւօտը ասանկ անցաւ, քիչ ատենի
մէջ շատ բան տեսան :

Աս միջոցին արեւը իր տաքցած ճառա-
գայթները կը սփռէր • Թէօփիլէն աղէկ

մը տաքցելու էր, բայց ամենևին չէր
գանդատէր. վասն զի ուրախութեան
մէջ էր՝ կզզին գալուսն համար: Քանի մը
ժամ ասանկ ճիւղերը կտրելէն ժող-
վելէն վերջը, հայրը ըսաւ թէփիլէին,
Գնա հիմա պտուկը և կերակուրները
բեր նաւակէն, դիր ծովին մօտ և կրակ
վառէ որ պատրաստենք ցորեկուան կե-
րակուրնիս: Տղան մէկէն վազեց, շուտ մը
կրակը վառեցաւ, իրենց պարզ կերա-
կուրն ալ պատրաստեցաւ. ջերմեռան-
դութեամբ Հայր մեր մը ըսելէն վերջը,
նստան մէկ մեծ ուռիի ծառի մը շուքին
տակը և անուշ անուշ կերան կերա-
կուրնին: — Հիմա ըսէ ինձի, ըսաւ հայ-
րը, այսօր ուրախ չես հոս գալուդ հա-
մար: — Հրամներ ես, հայր, շատ ու-
րախ եմ, ու շնորհակալ եմ հրաման-
քիդ: — Հիմայ նայէ տղաս ինչպէս ա-
նուշ կու գայ աշխատելէն վերջը հանդ-
ջիլը և ուտելը. մարդ մը որ շաշխատիր՝
պէտք չէ որ կերակուր ալ ուտէ. աշ-
խատութիւնը անանկ հարկաւոր է՝ ինչ-
պէս կերակուրը. վասն զի թէ որ
բանի մը ետեւ չըլլանք, կը թմրի մար-
միննիս ու ետքը բոլորովին կը տկարա-
նայ. դարձեալ՝ աշխատութիւնը Աս-
տուած մարդուն հրամներ է՝ մեր նա-

խափօրը անհնազանդութեանը համար :
Պէտք է ուրեմն ասիկայ յանձն առնենք
ու սիրով համբերեք ծառայութեան ,
որպէս զի աշխատանքով պատիժնիս
արդիւնաւոր ընենք : Տղաս , ասիկա
միշտ միտքդ բերելով փախիլը դատար-
կութենէ , ինչպէս մէկ պատժէ մը .
վասն զի ամէն մոլորութիւնք անկէ
առաջ կու գան , ու մեր ամէն գեղեցիկ
կ'արողութիւնները , որ Աստուծմէ ա-
ռեր ենք՝ կ'աւրըշարկեն : Հիմա քիչ
մ'ալ հանդէսէն վերջը , նորէն կը սկը-
սինք մեր գործքը . վերջը քեզի նոր զը-
ւարճութիւն մ'ալ կը գտնամ : — Ասյ
արդեօք ի՞նչ բան է : — Քիչ մը ատենէն
կ'իմանաս , շեմ՝ ուղեր առաջուցմէ ը-
սել , որ ետքը աւելի ուրախանաս :
Գնա դու հանէ նաւակէն կողովները
ու բեր , անոնք քեզի պէտք են : Թէ ո-
փիլէն հանեց կողովները ու ծովեզերքը
դրաւ . հայրն ալ պտուկը և ուրիշ
բաները դրաւ նաւակը : Աերջը ելան
գացին՝ մէկ տեղ տանելով կողովները .
բայց Թէոփիլէն հեռաքրքրութենէն
չէր կրնար համբերել , երբեմն հեռուէն
խօսքեր կը ձգէր որ բերնէն բան մը
առնէ . հայրն ալ իմանալով անոր վար-
պետութիւնը , անանկ պատասխաններ

կու տար որ չի կրցաւ բան խմանալ :

Քառորդէ մը վերջը հասան ծառուտ տեղ մը: — Աս տեղս կը տեսնան ըսաւ հայրը, ասե՛նօք իմ մեծ պապուս պարտեղն էր որ քիչ մը ասեն հոս բնակեր է, ու ետքը թողուցեր մեր գեղը եկեր է, խմելու ջուր և ուրիշ բնակիչ չի գտնաւուն համար. թէպէտ և տեղը ինչպէս որ կը տեսնես շատ գեղեցիկ ու զուարճալի է: Նայէ սա գեղեցիկ ընկուզի ծառը պապով լեցուն, իմ մեծ պապս տնկեր է հարիւր տա: ի առաջ: Հիմա կ'ուզեմ ես աս ծառիս վրան ելլել ու թոթուել, դուն ալ ժողովէ թափածները լեցուր կողովները և նաւակը տար: Թէոփիլէն ուրախութենէն վեր ցաթկեց տեսնալով այնչափ ընկուզի շատութիւն. ու հօրը ձեռքը պագնելով նորէն շնորհակալ եղաւ որ իրեն աս զուարճութիւնն ալ տուաւ: Հայրը ելաւ ծառին վրայ, հազիւ թէ մէյ մը թոթուեց. անձրևի պէս թափեցան ընկուզները աղուն վրայ, որ շուտ շուտ կը ժողովէր ասդին անդին վազելով: Մէկ հասա մըն ալ բերանը տարաւ, բայց հոն իր որկրամոլութիւնը բռնուեցաւ. ակռայով կոտորեց ընկուզին կանաչ կեղևը, ու մեծ գժուարութեամբ մը

կրցաւ բանալ. բայց լեզուն անանկ լե-
զրցաւ, ակռաները անանկ ցաւեցան որ
ուտելու փափաքն ալ մոռցաւ. սկսաւ
մեղադրել զՍասուած որ անանկ կարծր
ու լեզի կեղևներու մէջ դրեր է ան
պատուը: Հայրն ալ վերէն ըսաւ. մի
խաղար, մ'աշխատիր բանալու համար,
պէտք է թողուլ որ չորնան անոնք. ան
ատենը ինքնիրէն կը բացուին: Չմըան
իրիկունները շատ պիտի ուրախանաս
ասոնք ուտելով եղբայրներուդ ու
քուրերուդ հետ. մայրդ ալ կը սիրէ
ընկուզ, ան ալ պիտի ուրախանայ: Անոր
համար հիմա ժամանակ մի կորսընցը-
նէր, լեցուր կողովդ գնա պարպէ նա-
ւակին մէջ, ու շուտով դարձիր որ կա-
րենաս ամէնն ալ տանիլ, ու երկան ա-
տեն ուրախանալ:

Թէ ուրիշէն ալ յոյսը կարեց շուտ մը
ընկուզ ուտելէն՝ որուն շատ ատենէ ի
վեր կարօտցեր էր: Բայց ինչ պիտի ընէ,
հնազանդեցաւ հօրը խօսքին, ժողվեց
ընկուզները նաւակը տարաւ:



Գ Լ Ո Խ Խ Բ

Փոքոքիկ .

Քանի մը անգամ ասանկ երթալէն
գալէն վերջը, մէկ քանի խոշոր ընկուզ-
ներ աչքին զարկին, եկուր, ըսաւ, սը-
վոնք մէկդի գնեմ ու ինձի համար պա-
հեմ. ասոր ալ չէ ըսել չըլլար, այնչափ
աշխատեցայ ժողովելու և նաւակին մէջ
կրելու. աշխատանքիս վարձքը պէտք
է որ առնեմ: Ուրիշ բան չի մտածեց,
նստաւ նաւուն մէջ ընկուզներուն քով
սկսաւ դատել մեծերը ու աղուորնե-
րը, և պզտի կողովի մը մէջ գնել:

Երբոր ինքը աս գործողութեան
հետ էր, արեգակը ծածկեցաւ, սև սև
ամպեր մթնցուցին օդը, ցորեկուն
լուսաւորութիւնը գնաց:

Փիլիպպոս մէկ կողմէն ընկուզ կը
թափէր, Թէոփիլէն մէկալ կողմէն իր
կողով: Լեցընելով օդին յանկարծ փո-
փոխուլթիւնը ջիւնացաւ. մէյմ'ալ սաս-
աիկ հով մը տակն ու վրայ ըրաւ

ծովուն արիքները, ծառերը իրար ան-
ցան. ան ճիւղը որուն վրայ կապած
էր նաւակին ջուանը՝ երկու կտոր ե-
ղաւ, նաւակը հեռացաւ ինկաւ կապ-
ած ծովուն մէջ, ու մաղ մնաց որ
ընկզմէր : Խեղճ Թէոփիլէն շփոթած
բոլոր ձայնովը կը պռար. ձեռքերը
երկինք վերուցած մէյ մը զԱստուած
կը կանչէր, մէյ մը հայրը. բայց նա-
ւակը բաւական հեռացեր էր ցամաքէն :
Երբոր հայրը տղուն ձայնը լսեց, ծա-
ռէն վար ինջաւ, վաղեց գէս ի նա-
ւակը կապած տեղը : Այլ ամսոս, Թէ-
ոփիլէն այնչափ հեռու էր՝ որ հնարք
չկար իրեն օգնութեան հասնելու :
Բայց հայրական սիրտը չէր դիմանար,
վաղեց զինքը ծովը ձգելու որ լողալով
հասնի նաւակին. սակայն իմացաւ որ
անկարելի է մօտենալ, վասն զի ծովը շատ
տակն ու վրայ եղած էր, ու անշուշտ
պիտի խրդոտէր թէ որ ջուրը մանար :
Ուստի ձարը հասնելով, ծունկ չօքե-
ցաւ՝ Աստուծոյ յանձնեց իր արան :
Եւ այնչափ սիրտը խռոված էր, որ
գրեթէ ամենեւին չէր դգար ոչ անձ-
րեւին սաստկութիւնը ոչ փայլակներուն
և հովին ձայնը. ան հովին՝ որ երկին-
քը ու ծովը բոլոր կը խռովէր : Կը

տեսնար թէ ուրիշէն որ կուզար ու հա-
ղիւ կըրնար նաւակին մէջ կենալ, եր-
բեմն ջուրին սակը կ'իջնար երբեմն
աշիքներուն ծայրը կը բարձրանար,
մինչև կամաց կամաց պղտիկնալով բո-
ւորովին աներևոյթ եղաւ նաւակին
հետ մէկտեղ. իսկ խեղճ հայրը յու-
սահասու թեամբ ձեւերները գլուխը
զարնելով ետ դարձաւ: Քիչ ատենէն
ծովին ալեկոծութիւնը հանդարտե-
ցաւ. Փիլիպպոս անմխիթար ելաւ
բարձր ծաւի մը վրայ յուսալով որ
նաւակը տեսնայ, բայց բան մը չի
տեսնալով, վար ինչաւ. ոտքէն ին-
չուան գլուխը թրջած էր, ոչ կե-
րակուր ունէր ուտելու և ոչ վերար-
կու ծածկուելու. քանի մը ընկուզ
բացաւ, բայց ցաւը չի թողուց որ ու-
տէ: Տեղ մը փնտռեց թանձր անսա-
ւին մէջ՝ որ գիշերը անցընէ. դասա-
պղտի անկիւն մը ուր անձրիւր չէր
անցեր. հոն աղօթեց, պառկեցաւ և
սպասեց որ քունը դայ. բայց անկա-
րելի եղաւ վայրկեան մ'ալ հանգիստ
քուն ըլլալը:

Փոթորիկը որ կղզիին մէջ ասանկ
խուովութիւն հանեց, ցամաքին վրայ
ալ իր ահագին սասանութիւնը կ'ը-

նէր. Թէօփիլէին մայրը՝ որ պատրաստած էր իրիկուան կերակուրը, և կը սպասէր էրկանը ու արդուն, փոթորիկին ձայնը լսելուն պէս, կանչեց տղաքը ու ըսաւ. Մուսկ չողեցէք տղաք, աղօթք ընենք Աստուծոյ, որ ձեր հօրը և եղբօրը օգնէ. Թէ որ անոնք ծովուն մէջ բռնուած են առ հովէն, կըրնան գրգռողութեան մը հասնիլ: Եւ բարձր ձայնով ու հաստատ հաւատքով կանչեց. ո՛վ Աստուած, պահէ անմիտառ ասոնց հայրը, և բեր զինքը Թէօփիլէին հետ մեր մէջը: Տղաքն ալ լալով դողդրողով կ'աղաչէին ձեռքերնին երկինք կը վերցընէին, և աղօթք կ'ընէին սրտանց իրենց հօրը ու եղբօրը համար: Ան միջոցին որ ասոնք ծուռի չոքած խաչին դիմացը կը բարձրացընէին հառաչանքնին ու աղօթքնին դէպ ի երկինք, հովին ձայնը դադրեցաւ ու ալէկոծութիւնը սկսաւ ինչնալ: Մայրը իր փափաքով և յուսով կը կարծէր թէ պիտի տեսնայ էրիկը ու տղան, նստաւ պատուհանի մը դիմաց ուսկից կ'երևնար կզզին: Այսպէս սպասեց բոլոր իրիկունը, բայց նաւակը չի դարձաւ: Սիրտը անհանգիստ, արթուն կեցաւ գիշերը, դեռ յոյս ունէր որ

գան. Բայց պարտաւր ելաւ: Երկրորդ
օրը գնաց խնայուց Թումասին իր վա-
խը. ան ալ խոստացաւ որ եթէ ին-
չուան կէս օր Փիլիպպոսը ու Թէոփի-
լէն չգառնան, ես կ'երթամ կղզին կը
նայիմ, լուր մը կը բերեմ: Կէս օր
եղաւ ու Փիլիպպոս չգարձաւ. ան ա-
տենը Թումաս մտաւ իր նաւակներէն
մէկուն մէջ, ու սկսաւ երթալ դէպ ի
կղզին: Քանի մը ժամէն ետքը վերջա-
պէս մայրը ու աղաքը տեսան որ թո-
մասին նաւակը դէպ ի ցամաքը կու-
գայ. չկրցան ուրախանալ ինչուան որ
չտեսան թէ Թումասը մինակ չէր: Բայց
ան ուրախութիւննին ալ քիչ քչեց,
վասն զի քանի որ նաւակը կը մտե-
նար, կը տեսնէին որ Թէոփիլէն հե-
տերնին չէ. վերջապէս Թումաս եւ Փի-
լիպպոս ելան նաւակէն: Հասա Թէո-
փիլէն ո՛ւր է, սուսաց ցաւաղին մայրը:
Հօրը բերանը առաջ չգնաց պատասխան
տալու. իր լուութիւնը աւելի քան հաս-
կըցուց քան թէ խօսիլը: Վայ ինձի ը-
սաւ մայրը, ու սկսաւ լալ աղուն վրայ.
ձկնորսը կապեց նաւակը: Սիրտ ըրէ,
մի այդչափ արամիր, խեղճ մայր.
ուրիշ աղաքներ ալ ունիս, Աստուծոյ
ընծայէ Թէոփիլէն, իրեն կամայը

յանձնէ , քրիստոնէ մօր մը պէս :
Չենք գիտեր ինչ պատահեր է անոր ,
արդեօք ալիքներով մէջ , չենէ մօտիկ
կղզիներէն մէկը ձգեր է զինքը Աս-
տուած . իրեն յայտնի է : Մենք կ'եր-
թանք փնտռելու , բայց ուր ալ ըլլայ ,
գիտենք որ Աստուած միշտ աղէկ կ'ը-
նէ . մեզի ամենեւին չիյնար իրեն ծա-
ծուկ խորհուրդները քննել . այլ պէտք
է որ հետեւինք իր սուրբ կամայք , ու
խոնարհինք իրեն գաւազանին տակը ,
որով երբեմն կը ծեծէ զմեզ փորձե-
լու համար : Այսպէս ատենօք Յակոբ
նահապետը կորսնցուց իր սիրական
Յովսէփը . բայց Աստուած վերջը իրեն
դարձուց : Ո՛վ գիտէ որ Թէոփիլէն
ալ օր մը անանկ չըլլար . Աստուծոյ
անկարելի բան չկայ : Ուստի մի կոտ-
րեր սիրող . Աստուծոյ յանձնէ քու
աղուգ վիճակը :

Թոմաս որչափ որ կը ջանար մխի-
թարելու հայրը , մայրը , եղբայրները
ու քուրերը , անոնք լալէն չէին գա-
դրեր :

Ա՛խ ինչպէս կորսնցուցինք , կ'ըսէին ,
մեր սիրելին , ինչպէս խեղճ Թէոփիլէն
աներևոյթ եղաւ : Աս սգալի լուրը
մէկէն բոլոր գեղը լսուեցաւ . ամէն

կողմէն կուգային Փիլիպպոսին տունը
մխիթարելու խեղճերը. իրենք ալ չէ-
ին կրնար արցունքնին բռնել: Ոմանք
կը կարծէին թէ աչիքներուն մէջը
թաղուած է սղան, ոմանք ալ կը հաս-
տատէին թէ ողջ պիտի ըլլայ: Ամէն
ծովեղերեայ գեղերը իմաց տրուեցաւ
թէ ո՛վ որ գանէ Թէոփիլէն, շուտով
հասցընէ իր ծնողացը:



Այս գրքի մէջ անկէտեղ անհոգ անտարբերութեամբ իր
մտքով շարժուող մտքով մտաւորականութեամբ
իմաստասէտներու անհոգ անտարբերութեամբ
անտարբերութեամբ մտաւորականութեամբ
անտարբերութեամբ մտաւորականութեամբ

ԳԼՈՒԽ Գ

Անաստաս կղզի.

ԲԱՅՑ Թէօփիլէն, որ շատերը մե-
ռածի տեղ դրեր էին, դեռ ողջ էր.
Աստուած ողորմեցաւ իրեն, ու նա-
ւակը քշեց տարաւ դէպ ի կղզի մը,
որուն մէկ կողմը ժայռերով ծածկած
էր, և հովը մէկ խորշ մը ձգեց: Թէ-
օփիլէն տեսաւ որ կըրնայ նաւակէն
ելլալ, մէկէն ցամաքը ցաթկեց, ճան-
կըստելով ժայռի մը վրայ ելաւ. վրան
գլուխը անձրևէն խիտամ էր եղած,
նաւակն ալ ջրով լցուեր էր: Իր առջի
գործքն եղաւ մէկէն ծընկան վրայ իյ-
նալով Աստուծոյ շնորհակալ ըլլալ. իր
կեանքը ազատելուն համար. ետքը տե-
սաւ որ անաստաս կղզիի մը մէջ ընկեր
է, սկսաւ դողդըղալ. աչքին ժայռէն
ի զատ ուրիշ բան չէր երևնար: Մէկ
քանի ծառեր կային տեղ տեղ ծովին
եզերքը, բայց բանած գետին չէր տես-
նուեր. վայրի ծառեր, ջրային բոյսեր

ու խոտեր. բոլոր բոլոր ասոնք էին
աս անասատ կղզւոյն բերքը:

Ալէկոծութիւնը անցեր էր, արևը
մարը մանալով բարակ լոյս մը ձգեց
ծովուն անհուն տարածութեանը վրայ:
Թէոփիլէն հեռուէն տեսաւ ան կղզին
ալ ուր հօրը հետ գացեր էր ուսի
ճիւղ ժողվելու, որ խոտերով զարդա-
րած պղտիկ բլրի մը պէս կ'երևար
ծովուն մէջ. իսկ ցամաք գետինը որ
այ հեռու էր, սև մշուշի պէս հազիւ
կ'երևար: Փուճ տեղը աչուրները կը
յոգնեցրնէր Թէոփիլէն գանելու իր
հօրը խրճիթը կամ Թումասին տունը.
ան ատենը արամած իմացաւ որ իր
տեղը անբնակ վախնալու կղզի մըն է:
Ուրեմն, ըսաւ, ոչ երբէք իմ ծնողքս
հոս պիտի գան զիս փնտռելու. վասն
զի ամենեին չեն կարծէր որ աս կող-
մերս կղզի գանուի: Թումասը որ ամէն
դի պըտրտեր տեսեր է, ամենեին բան
մը չէ ըսած ինծի աս տեղւոյն վրայօք.
Ուրեմն զիս խղդուած պիտի կարծեն
ալիքներուն մէջ. ես ալ հոս սովէն պի-
տի մեռնիմ: Բայց Աստուծոյ կամքը
օրհնեալ ըլլայ. ես արժանի եմ ասանկ
պատժի մը յանցանքներուս՝ մանա-
ւանդ անհնազանդութեանս համար,

վանս զի, թէ որ նաւակին մէջ չարն-
արնայի ընկուզներուն մեծերը ընարե-
լու և որկրամուլութիւնս գոհ ընելու
համար, փոթորիկը յանկարծակի վրաս
չէր հասնէր ու հիմայ հօրս քով կ'ըլ-
լայի: Ահա իմ չար յօժարութեանս
հեռեւելուն պատուը. այնչափ անգամ
զիս կը խրատէին կը յանդիմանէին,
ինձի ջրի ձայն կու գար: Հիմա իմ
անկարգութեանս գերի եղած եմ, և
ճարս հասեր է. ձեռքէս բան մը չի
գար, ես եմ իմ թշուառութեանս
պատճառը. բայց արժանի եմ գլխուս
եղած աս խեղճութեանը: Երբոր ա-
սանկ կ'ողբար կը ճանչնար իրեն պա-
կասութիւնները, աչուրները նաւա-
կին վրայ գարձան, շուտ մը հոն գնաց,
տեսաւ որ պէտք չէ ժամանակը կո-
րսնցընել մէջի բաները ազատելու հա-
մար. հանեց ցորեկուան կերակուրէն
մնացածը, ընկուզները, ամանները,
գործիքները, հօրը վերարկուն, պատու-
կը, կացինը. վերջապէս ինչ կար չկար
ամէնն ալ ցամաքը հանեց. նաւակն ալ
բանի մը բերելու համար, քակեց
կոտրեց ու փայտերը զատեց: Աս
զբաղմունքը երկայն քշեց, անանկ որ
լուսնկան ելած էր, երբոր նաւակին

վերջի աախատակները դուրս կը քաշէր : Ան օրուան աշխատանքը ու քաշած վախը անանկ յօգնեցուցին զինքը , որ գործքը լրմնցընելուն պէս , փռեց հօրը վերարկուն , գլուխը դրաւ նաւակին աախատակներուն վրայ , պըլլուեցաւ պառկեցաւ :

Աս առջի անգամն էր որ Թէօփիլէն գիշեր ատեն բայ տեղ քուն եղաւ , մանաւանդ ասանկ անապատ կղզի մը՝ ուր մէկը շէր եկած և ոչ մարդ տեսեր էր : Ան ատենը իմացաւ թէ ծնողացը հետ բնակիլը , հանգիստ անկողնի մէկ պառկիլը ի՞նչ աղէկ բան է եղեր , որ ոչ գիշերուան ցրտէն և ոչ վախէն նեղութիւն կը քաշէ : Այսպէս ան ատենը իրեն անկարգութեանը համար կ'ուշար . բայց աս դեռ գալու նեղութիւններուն սկիզբն էր : Առանց փորձանքի անցաւ գիշերը . և Թէօփիլէն կրցաւ քունի մը ժամ անուշ քունը լլաւ . բայց վախնալու երայներ զինքը անհանգիստ ըրին՝ մէյ մ'ալ արթընցաւ ծովի թռչուններուն ձայնէն , որ գլխուն չորս զին կը թռչրակին : Արևը նոր կը ծագէր՝ Թէօփիլէն ելաւ իր աւաւօտան աղօթքը ըրաւ . ու ըսաւ ինքն իրեն . Ա՛րշափ տարբեր էր երե .

կուան վիճակըս ասորուանէն. երէկ
իմ բարեպաշտ Տնողացս հեա էի եր-
ջանիկ և ուրախ, այսօր երեսէ ձգած
մինակ մնացեր եմ: Արէկ բան մը չէր
պակսէր ինձի՝ այսօր ամէն բանէն զըր-
կուած եմ. երէկ՝ որուն հեա որ կ'ու-
զէի կը խօսէի կը խնայի. ասօր ըն-
կեր մը չունիմ թռչուններէն ի դաս:
Աս ամէն բանը գլխուս եկաւ յօժա-
րութեանս ետէն երթալուս հա-
մար. իբր թէ հայրս ինձի չափ խելք
չունէր, ուզեցի որ ես իմ կամքովս եր-
թամ. ա՛հ, սա մէկ օրուանս մէջ ի՞նչ-
պէս խելքս գլուխս եկաւ, ի՞նչ ալէկ
համար սախ:

Աստուած թէ որ գիտ պատժէր մեզ
քերուս համար, ու ալիքներուն մէջը
թողուր որ խղճուէի, հիմա ո՛ւր պի-
տի ըլլար հոգիս: Ար խոստովանիմ հոս
առջիդ, ո՛վ Աստուած իմ, ես արժա-
նի էի քու պատժուդ ու բարկու-
թեանդ. և հիմա ամօթով կ'աղաչեմ
քեզի մի թողուր գիտ երեսէդ. օգնու-
թիւն հասիր ինձի սա կողիս մէջ. կը
խոստանամ ալէկ մը շրակել իմ վարքս,
բարեպաշտ ու խոհեմ ըլլալ: Թէ որ
սա աւանձնութեան մէջ ես պիտի մեռ-
նիմ, իմ օրերս զքեզ գովելով ու օրհնե-

լով պիտի անցընեմ. իսկ թէ որ քու
բարութիւնդ կ'ուզէ որ նորէն դառ-
նամ իմ հօրս տունը, առջի հպարտու-
թեանս տեղ՝ խոնարհ պիտի ըլլամ. քո
խանակ անհնազանդութեանս՝ հնա-
զանդ. ու քոնակ կամակորութեանս՝
ամէնուն անասցող:

Աս մտածմունքը մտքէն անցընելէն
վերջը, թէ ուրիշէն քիչ մը հաց ու բա-
նի մը ընկուզ կերաւ: Նախաճաշիկը
ընելէն վերջը, միտքը դրաւ որ երթայ
կղզիին չորս կողմը պըտըտի, որպէս
զի աղէկ գիտնայ թէ արդեօք բնակու-
թեան նշան մը կայ. ու թէ որ չգտնայ,
իրեն բնակելու տեղ մը ճարէ:

Վախնալով որ շատ չհեռանայ՝ իր
հոն դրած հարկաւոր բաներէն, մեծ-
կակ կտոր մը հաց առաւ, կտոր մը միս
ու քանի մը բացած ընկուզ. ետքը հաս-
արկեկ ուռիի ճիւղ մը կտրեց՝ իրեն
գաւազան ըրաւ, ու ինքզինքը Աստու-
ծոյ յանձնելով ճամբայ ելաւ: Բայց ա-
մէն վայրկեան սիրտը կը նետեր արդեւթ-
ներ գտնալով. երբեմն պէտք կ'ըլլար
որ խորտուբորտ ժայռերուն վրայ
ճանկաւտելով ելլայ. երբեմն վտանգա-
ւոր փոսերու քով կ'իյնար: Աւրիշ բան
չտեսաւ բոլոր կղզիին մէջ, բայց ըն-

դարձակ բլուր մը մոխրագոյն ժայ-
ռերով՝ որոնց սասրոսը ինչուան ծովը
կ'երկրննար, ու ծայրերնին խորտու-
բորտ ձեւացած հազարու մէկ ծուռու-
մուռ տեղուանք ունէր՝ որ մարդու
սոսկում կը բերէն : Աս ժայռերուն
վրայ տեղ տեղ բարակ խոտ մը բու-
սած էր, բայց ամենեւին մարդու սաքի-
նչան չէր երևնար, ինչպէս նաև բոլոր
կղզին մարդու փափագը լեցրնելու բան
մը չունէր. ամենեւին նշան մ'ալ չի կար
որ աստե՛նօք հոն մարդ սաք կոխած ըլ-
լայ բնակելու համար :

Թէ՛ ուրիշէն առաջ երթալէն չէր դա-
դրեր, պարսպ տեղը պաղի ծառ կը
փրնտուէր. վերջապէս հազար նեղու-
թիւն քաշելէն ետև, հասաւ կղզին
հարաւային կողմը : Հոն սիրտը ուրա-
խութենէն ճիւղաց՝ երբ լսեց որ մօտ
տեղէ մը պղտի առուակի ձայն կու-
գայ, որոյն մաքուր ջուրը քարերէն
խոխոջալով կը վաղէր խոտերու մէջ կը
ծածկուէր. մէկէն վար ինչաւ փնտուեց
ջրին աղբիւրը, ու շատ ուրախացաւ
աս անգին գիւտին վրայ : Հոն նստաւ
հանեց իր հացը միւր և ընկուզները,
ու ճգնաւորի պէս կերակուր մը կե-
րաւ. ան մաքուր ջուրէն ալ խմեց,

փառք առաւ: Ան տեղէն քիչ մը հե-
ռու տեսաւ քանի մը եղևին ծառեր,
որ ժայռերուն մէջէն դուրս կ'ելլային.
աղէկ մը քննեց ան պղտի անկիւնը,
տեսաւ որ հոն կրնայ հաստատել իր
քնակարանը, որովհետեւ ջուրը մօտ էր.
Ծառերն ալ շուքէն ի դաս իրեն փայտ
ալ կու տային: Բայց պէտք էր որ ետ
դառնայ, ու իրեն պաշարը հոն բերէ:
Աս ծանր գործք մըն էր, որովհետեւ
ճամբան հեռու էր, քաշէն ալ դժուար
ան ժայռերուն մէջ: Զմուռտելու ու
ժամանակ չկորսընցնելու համար, տեղ
տեղ քարեր կը դնէր՝ որ անոնցմով
շիտակ տեղը հասնի. իրիկուան մօտ
հասաւ հոն ուր դրեր էր կերակուրնե-
րը: Աս գիշեր աւելի հանգիստ անցուց.
Քիչ մը բան ուտելէն վերջը, մէկէն
փաթտուեցաւ հօրը վերարկուին մէջ
ու քնայաւ:

Առաւօտը կանուխ ելաւ, սկսաւ իր
նոր ընարած տունը տանիլ ունեցած
բաները. ասանկով շատ հեղ եկաւ
գնաց, ամէն անգամ մեծ նեղութիւն
քաշելով: Վերջապէս քանի մը օր աչ-
խատելէն ետքը, բոլոր բաները կրեց
ծառերուն տակը՝ ու մէկէն ձեռք զար-
կաւ շինելու իրեն քնակարանը, որ

տաքէ պաղէ շինասուելու տեղ մը ու-
նենայ: Ապցինովը կարեց ուռիի ճիւ-
ղերուն կապերը, ու ծառերուն ար-
մասները մէկտեղ կապեց: Ետքը նա-
ւակին փայտերը առաւ, ասդիէն ժայ-
ռին կռթընցուց, անդիէն ծառերուն:
Քանի մը ցից անկեց գետինը, որ շի-
նած ծածքը հաստատ բռնէն, ու ա-
նոնց մէջտեղուանքը զգուշութեամբ
գոցեց խոտով: Աս պղտի խորճիթը ա-
սանկ գոցուելէն վերջը, արևուն տա-
քութենէն, ու օդին թացութենէն կը
պահէր զինքը: Եստ մը խոտ ալ իրեն
անկողին շինելու համար ժողվեց. ու
միշտ վրան կ'ատեր հօրը վերարկուն
պառկած ատենը, վրան զի ան տեղը
գիշերները ցուրտ կ'ընէր:

Արովհետեւ կրակ լաւելու քար ու-
նէր զարկաւ ծծումբը բարնկցուց,
կրակը վառելուն պէս սկսաւ ուրա-
խանալ որ անով ձմեռուան ցուրտին
գէմ պիտի գնէ: Ետքը հաստը ծառի
մը կոճղէն շինեց իրեն աթոռ ու սե-
ղան. լայնցուց վազուկ ջրին ճամբան.
մեծ մեծ քարի կաորներով շինեց վա-
ռարան մը, կերակուր եփելու համար.
ու մոխրի տակ կրակ կը պահէր, որ
պէս զի ծծումբը չի խարճէ, որն որ

իրեն ոսկիէն աւելի հարկաւոր էր :
Թէպէտև խեղճ տղուն վիճակը ասանկ
քիչ մը կարգի եկաւ, բայց վախը սիր-
տը առեր էր. վասն զի օրէ օր իրեն
պաշարը կը պակսէր, ուտելու միտը
հատեր էր, հացը քար դարձեր էր,
ընկուզը երկայն ատեն չէր քշեր.
սովէն մեռնելու վտանգը շատ հեռու
չէր: Ամէն օր կ'ելլէր Ժայռին ծայրը,
կը դիտէր թէ արդեօք վաճառականի
նաւ մը կ'անցնի, կամ ձկնորս մը կը մօ-
տենայ. ու առանց բան մը տեսնալու
կ'ինչնար: Այլ յոյսը կարեց կղզիէն ա-
զատելու. մտածեց որ հոն ապրելու
ճար մը գտնայ. նորէն պարտեցաւ ծո-
վին եղերքը որ կարելի է արմատ մը
կամ խոտ մը գտնայ, ու եփէ ուտէ.
բայց խիստ քիչ բան գտաւ. առուին
քով ալ քիչ մը վայրի շոմին գտաւ,
անով քանի մը օր կերակուր ճարեց
իրեն: Ետքը մնացած ընկուզներն ալ
կերաւ լմնցուց, ու ցաւած սրտով ըն-
կաւ ազաչեց Աստուծոյ որ իրեն կե-
րակուր խրկէ :

Այլօթքը ընդունելի եղաւ. վասն զի
քիչ մը վերջը ծովին եղերքը պարտե-
լու ատեն տեսաւ պղտի ձուկեր, որ
կը վտաային ցամաքին մօտ. աւազին

վրայ փռուեցաւ ու ջանաց որ ձեռքով բռնէ, բայց չեղաւ. կարթ մը ունենար՝ բանը դիւրին էր, բայց ուսկից գանէ : Նրբոր արամած կը մտածէր հոն, վերէն թռչուն մը անցնելու առանքերնէն որդ մը ձգեց ծովուն մէջ, մէկէն քօան երսուն պզտի ձուկեր վաղեցին աս որսին վրայ մէկմէկէ խելով : Թէ որ ասոնք, ըսաւ Թէօփիլէն, այսչափ կը սիրեն ճրճիները, երթամ ես ալ փնտռեմ ու դերձանի մը կապեմ, որսամ զիրենք : Շուտ մը գնաց իր խրճիթը հօրը վերարկուին մէկ ծայրը քակեց դերձանը հանեց, դարձաւ ծովեղերքը. ճճի մը կապեց և իջեցուց ջրին մէջ, մէկէն ձուկ մը վաղեց կլլեց. Թէօփիլէն ուրախութենէն սիրտը նետելով շուտ մը դուրս քաշեց. բայց ափսո՛ս, ձուկը՝ դերձանը Թէօփիլէին ձեռքը թողուց փախաւ : Խեղճը խմացաւ որ ասանկ չըլլար, գնդասեղ մը հանեց զգեստին վրայէն, կապեց դերձանին ճոթը, որդ մը անցուց, իջեցուց ծովը. ու վերջապէս ձուկ մը բռնեց, ինտուսէն վեր ցատկեց. նորէն ձգեց կարթը, ու շատ ճքչեց եօթը ութը ձուկով դարձաւ իր տեղը. ասանկ ուրախութեամբ ճամբայ

չէր ըրած ծովեզերքէն ինչուան իր
անակը, կը կարծէր թէ ամէն բան փո-
խուեր է: Մէկէն կրակը վառեց, ձու-
կերը մաքրեց. և որովհետև քիչ մը
կարագ ալ ունէր՝ անով տապկեց, ու
հաղիւ կրցաւ սպասել որ սպէկ մը
եփին որ ուտէ: Աս կերակուրը շատ
վեր էր ընկուզէն ալ՝ վայրի խոտերէն
ալ: Անկէ վերջը առաւօտուան դէմ
կ'երթար ձուկ բռնելու, երբեմն լե-
ցուն երբեմն պարսպ ձեռքով կը դառ-
նար. ձկները ջուրին մէջ կը ցատկըռ-
տէին առանց կարթը խածնելու. աս-
կէ սկսաւ թէփփիլէն նորէն վախնալ
որ ուտելիքը չհասնի: Ահաւ ուրիշ
հնարք մը փնտռել որ ասոր ճարը
գանայ. և որովհետև կը տեսնար ծո-
վուն մէջ իրեն բռնածէն շատ խոշոր
ձկներ, մտածեց որ աւելի մեծ կարթ
մը հնարէ: Նախ փայտէ պիտի շինէր,
բայց խմայաւ որ անով չըլար: Օր մը
իր խրճիթին մէջ նստած կը մտածէր
թէ ուսկից գանայ կարթի ատեղ մը,
մեծ ձուկեր բռնելու, որ իրեն քանի
մը օրուան կերակուր ըլլան: Տեսաւ
որ իր նաւակին հին փայտերուն մէջ
գամեր կան, շուտ մը մէկ հասը հա-
նեց ու քարի վրայ ծեծելով բարակ-


ցուց ճոթը. շատ նեղութեամբ ծուց
ու կեռ ըրաւ, որ կարենայ գործա-
ծել: Երբոր շինեց մեծ կարթը, ան-
ցուց դամին մեծ ճճի մը, ու կապեց
բարակ ջուանի, որ ինքը իր հօրը վե-
րարկուին բուրդէն հիւսեր էր. առջի
անգամ նետելուն՝ մեծ ձուկ մը
բռնեց, ոտքին քովը պառկեցուց և
ուրախութեամբ վրան կը նայէր. ի՛նչ
բաղդ, ի՛նչ երջանկութիւն. իրեք օ-
րուան կերակուր կ'ըլլար իրեն առ ձու-
կով. մէկէն ճղքեց մաքրեց. դարձաւ
իր տեղը կաօր մը խորվեց, մէկալը
աղեց՝ զով տեղ մը խոտի աակ պահեց:
Ասանկով գաաւ Թէոփիլէն իր ապ-
րուսաին ճամբան. բայց նոր վասնդի
մէջ ճիշտալու համար, երկու ժայռին
մէջ պղտի աւազան մը փորեց՝ ձուկե-
րու համար, ջուր բերաւ լեցուց, մէջը
ձկներ ձգեց, որ ուզած ասենը կարե-
նայ անկէ հանել առանց ամէն օր ծո-
վեղերքը երթալու: Մէկ ուրիշ խելք
սորվելու ճամբայ մ'ալ գաաւ: Ամէն
անգամ որ կ'երթար ձկնորսութեան,
կը գանէր զանազան տեսակ ժժմունք-
ներ, ու մեռած պղտի ձուկեր աւա-
զին վրայ, որ ծովին քաշուելու ասե-
նը՝ հոն մնացեր էին. խմայաւ որ ծո-

վին ցածնալէն . առաջ կու գայ առ
բանս . միտքը դրաւ որ հոն ալ պղտի
աւազան մը շինէ : Աս բանիս համար
աղէկ տեղ մը ընտրեց , ու փորեց ,
քարով պատեց . մէջ մ'ալ նայիս եր-
կու օրէն վերջը առ ծակը ոտարէով ու
ձկներով լեցուեր է : Ալ չեմ կրնար
ըսել թէ որչափ ուրախացաւ Թէոփի-
լէն առ բանը տեսած ատենը . ջերմե-
ւանդութեամբ շնորհակալ եղաւ Աս-
տուծոյ , որ ցըցուց իրեն առ նոր
պաշտպանութեան նշանն ալ :

Այս պատմութիւններուն մէջ խեղճ
Թէոփիլէն չէր մտնար քաջած նեղու-
թիւններն ալ՝ ան անասաւտ տեղը ,
մանաւանդ ձմեռը կրակին քով կը
նստէր , միտքը ամէն բանի վրայ կը
պարտէր , ու սիրտը կ'ելլար երբօր կը
յիշէր իր սիրելի ծնողքը , աչուրները
արցունքով կը լեցուեր . քանի որ ու-
ղելով չուղելով միտքը կ'իյնար ան եր-
ջանիկ օրերը , որ հօրը խուցին մէջ
նստած իրեն եղբայրներուն հետ մտիկ
կ'ընէր հօրը . որ մէկ կողմէն պատմու-
թիւն կը պատմէր , մէկ կողմէն ալ կո-
ղով կը հիւսէր , երբ իր մայրը և քու-
րերը բամպակ կը մանէին , երբեմն
երբեմն հոգևոր երգեր երգելով . կամ

Թումար սգաակար բան մը կը կարգար, վերջը կերակուր կ'ուտէին, ու վարդարան զրուցելէն ետքը կը պառկէին ուրախ սրտով: Աս ամէն բանը յիշելէն ետև Թէոփիլէն տեսնելով զինքը որ մինակուկ անապաս կզգլի մը մէջ ինկած է, ոչ կըրնար մարդու հետ խօսիլ, ոչ մարդու մը ձայն լսել, իբր թէ գերեզմանի մը մէջ մտած կ'ապրի. ո՛հ ինչպէս կը զզջար, ան ատենը շատ հեղ իր եղբայրներուն և քուրերուն հետ կուր ընելուն և իր կամակորու թեանը վրայ: Շատ անգամ կ'ըսէր ինքիրէն՝ աչուրները արցունքով լեցուած. Աստուած՝ չէր կրնար ուրիշ արժանի պատիժ մը առ ինձի պէս շատախօս ու կուտակէր սղու մը, բայց եթէ ձգելով աս առանձնութեանս մէջ, ուր ուզեմ՝ չուզեմ լուռ պիտի կենամ: Աստուծոյ տուած պարգևները հոն չարաչար գործածեցի, աղէկ ըրաւ որ զիս հիմայ ան ամենէն զըրկեց, անխոհեմ մարդիկ միշտ կը պատժուին իրենց յանցանքով: Ասանկ կը մխիթարէր Թէոփիլէն ինքը զինքը երէն խեղճութեանը մէջ, մտածելով որ արժանի էր ան պատժոյն. և թէ աս ապաշխարութեամբ պիտի թողու.

Թիւն Կանէ անցած դացած յանցանք
ներսն :



Եւ ինչ որ անցած է անցած է և չի վերադառնում
և ինչ որ անցած է անցած է և չի վերադառնում
և ինչ որ անցած է անցած է և չի վերադառնում
և ինչ որ անցած է անցած է և չի վերադառնում
և ինչ որ անցած է անցած է և չի վերադառնում

ԳԼՈՒԽ Դ

Նոր Ռուսիան .

Մեկիսկ ասարևոյն եղանակները կը փոխուէին աւանց ցուցընէլու իրենց այլ և այլ օգուտը, որ ուրիշ տեղուանք կ'երևան: Ասանկ, գարունը երբոր գայ՝ հետը կը բերէ մեծ զուարճութիւն մը ամէն արարածներու վրայ. հոս տեղը ուրիշ բանէ չխնայուեցաւ անոր գալը բայց եթէ թրջուեննէրուն բոյն շինեւէն, որոնցմէ թէ ուրիշէն հաւկիթները կ'աւանէր կ'ուտէր. շիկար մէկ պատու մը, մէկ հոտաւէտ ծաղիկ մը, որ իր սիրտն ալ նոր գարնան զուարճութիւն մը գայ: Ամէն օր մէկ ժամ մը առաւօտը, ժամ մըն ալ իրիկունը աղօթք կ'ընէր, ու անով ուրախութիւն կը գտնար, որ սիրար Աստուծոյ ձեռքը յանձներ է: Թէպէտ իր կերակուրը քիչ ու պարզ բան մըն էր, բայց ինքը առողջութենէն ի դատ աղէկ մը ուժով նաւ և մեծցաւ: Միայն ասոր վրայ կը

ցաւեր՝ որչէր կրնար ժամ երթալ, ու
քարոզ լսել :

Պարապ ատենները կ'երթար ծովին
եղերքը ու ծովէն ձգուած մարգարիտ-
ներ՝ բուստի ճիւղեր կը ժողվէր, և
կողովներու մէջ կը շարէր : Թէ որ,
կ'ըսէր, ատենօք ծնողքս տեսնելու ըլ-
լամ՝ իրենց գանձ մը տարած կ'ըլլամ,
որ ծերուծեան ատեննին շատ հար-
կաւոր կ'ըլլայ իրենց : Աս մարգա-
րիտները հարուստները սուղ սուղ պի-
տի գնեն, ասկէ օր մը բաւական ստակ
կ'ելլէ, ես ալ հօրս աշխատանքին կ'օգ-
նեմ, տարիքս մեծնալով աւելի ուժով-
ցած եմ, իրեն կաթընելու գաւազան
մը կ'ըլլամ :

Օր մը Թէօփիլէն չկրցաւ խրճիթէն
ելել սաստիկ անձրև գալուն, ու նստեր
կը մտածէր իր ծնողքը, ու անոնց դէմ
ըրած ապերախտութիւնը, ուրիշ զբա-
ղանք ալ չունենալով՝ բոլոր օրը խոր
արամուծեամբ անցուց, և չուզելով
քիչ մը կերակուր կերաւ որ սրտին
մարելիք չգայ : Արիկունը կանուխկէկ
նոյն արրամուծեամբ պառկեցաւ
ու շուտ մը քունը տարաւ : Արագ
մ'ալ տեսաւ, որ թէ՛ արամեցուց և
թէ՛ մխիթարեցլինքը, կը տեսնար իր

հայրը որ առնը կը մտնէր, զինքը
գրկած ու իր ընտանեացը մէջ կը առ-
նէր. ո՛հ, հայր հայր, կանչեց, ու զատ-
արթնցաւ. գիշերուան մթ ու թեւէն բան
չտեսաւ, ոչ ձայն կար, ոչ շարժմունք.
Բայց սկսաւ վտիմաւ, ջրլայ թէ տեսածը
ցնորք մը լլայ, հաղիւ կրնար հաւ-
տալ թէ երազ է, ուրիշ բան չէ: Ո՛ւր
էր թէ, ըսաւ, դար իմ սիրելի հայրս
ու զիս առ բանտէն ազատէր: Բայց
արժանի՞ եմ: Թէ որ յառաջ իրեն
մտիկ ընէի, հիմայ հոս չէի լլար:
Խեղճը կը կարծէ որ ես ընկզմած եմ:
Բայց ինչո՞ւ ասանկ հոգ կ'ընեմ. ու-
րիշ հայր ալ չունիմ արդեօք երկին-
քը: Իրաւ՝ ես չեմ տեսներ զանիկայ,
բայց կը գտնամ զինքը ամէն սքանչե-
լի գործոցը մէջ: Ինքը չէ՞ որ ինչուան
հիմայ ողջ պահեց զիս. ինքը չէ՞ որ ին-
ձի համբերութիւն կու տայ առ միայ-
նութեանս մէջ: Իրաւգրնէ. ո՛վ Աս-
տուած, չունիմ բան մը որ քեզմէ առած
ջրլամ. քու գթութիւնդ ամէն օր իմ
վրաս նոր նոր բարերարութեամբ կը
յայտնես: Ի՞նչ պիտի լլայի ես, թէ որ
զքեզ չճանչնայի: Ի՞նչ թշուառ պիտի
լլայ ան մարդը՝ որ զքեզ չսիրեր, ու
չճանչնար քու երախտիքդ: Ես՝ միայն

քեզմով կրնամ մխիթարուել , քու
յիշատակդ է միայն որ կ'անուշընէ իմ
նեղութիւններս . անոր համար օր օ-
րուան վրայ դքեզ աչաւելի պիտի սիրեմ ,
ու իմ երախտագիտութիւնս քեզի
պիտի ցուցընեմ :

Այս սիրոյն մէջ աւելի վառուելու
համար շատ անգամ կ'երթար բարձր
ժայռի մը գլուխ կը նստէր , ու հոն
արեգական ելլալը կը դիտէր դմայե-
լով . ծովուն ալիքներուն երկնքի ամ-
պերուն պէս կը լուսաւորուէր սիր-
ար , արցունքը երեսէն կ'իջնար բա-
րակ անձրևի պէս : Ար մտածէր աշ-
խարհքիս մէջ եղած ամէն զարմանալի
բաները . ամէն ծաղիկ , ամէն խոտ՝ ի-
րենց Աստուծոյ մեծութիւնը կը ցու-
ցընէին . ինչպէս ան բարձր եղեւին
ծառերը , որ արևուն տաքութենէն
զինքը կը պաշտպանէին , ձմեռուան
ցրտէն կը պանէին իրենց ճիւղերէն
վառած կրակովը : Աս մտածմունքներէն
միտքը ուրիշ բան մ'ալ ընկաւ , ու
շատ ցաւեցաւ որ ինչուան ան ստեղծ
չէ մտածած : Այնչափ ստեղծ հոս եմ ,
ըսաւ ինքիրէն . ամենևին մտքէս չէր
անցած , քրիստոնէի փրկութեան նշա-
նը տրնկելու հոս սեղը , որպէս զի

միշտ խաչը տեսնելով ես ինձի խրատ
առնեմ, անով Յիսուսին սէրը վառի
սրտիս մէջ. յիշեմ որ ինքը մեզի պէս
եկաւ մարդ եղաւ, չարչարուեցաւ .
բոլոր արիւնը թափեց, ու զմեզ ա-
զատեց :

Նրկրորդ օրը ելաւ թէփփիլէն ընտ-
րեց եղևինի գեղեցիկ ճիւղեր, կարեց
կայնիսով ու անկէց շինեց խաչ մը . և
ինչպէս որ առջի օրը մտածեր էր, ան-
կէց ան ժայռին վրայ ուր աղօթք կ'ը-
նէր . չորս գին քարերով ու հողով պա-
տուանդան շինեց, որ հոն երկրպագու-
թիւնը ընէ : Նաքը ուրիշ շատ տեղեր
ալ ծովին եղերքը խաչեր անկէց, յու-
սալով որ աս նշանը նաւավարներուն
ցուցնէ թէ կղզին մէջ բնակիչ կայ :
Ինչպէս որ հօրմէն լսեր էր, աստուա-
ծաշունչի պատմութիւններ միտքը բե-
րաւ սուրբ Յովհաննէս Մկրտիչը, որ
մինակ անապատի մէջ կը կենար . ճանչ-
ցաւ որ միայնութիւնը կը վախցնէ
աշխարհքիս հոգը զբաղմունքը սիրող-
ները. բայց կատարեալ քրիստոնէի մը
աւելի օգուտ կրնայ բերել ինքիւր
գլխուն Աստուծոյ հետ ըլլալով : Այս-
պէս աս անմարդաբնակ կղզին թէփի-
լէին շատ օգտակար եղաւ, բարեպաշտ

ու խեղացի կտրիճ մը ըլլալու. որ կարելի է թէ հօրը տանը մէջ չէր կրնար ըլլալ ասանկ գիւրին կերպով :

Մինչև ան ատենը թէօփիլէն ալէկ առողջութեան մէջ էր, բայց բան մը պատահեցաւ որ զինքը անկողին ձգեց. որովհետև ռաքի ամանները մաշեր էին՝ քարոտ գեանին վրայ քաշէլէն, բոպիկ ռաքով կը վազէր. օր մը ծովեղերքը ռաքին սուր ռսարէի կեղև մը մտաւ, արիւնը գետի պէս վազեց, անանկ ուռեցաւ ռաքին տակը ու ցաւցուց որ հազիւ կրցաւ տեղը հասնիլ, խոտէ անկողնի վրայ խնալ : Շատ խեղճ վիճակի մէջ էր, ոչ գեղ ունէր, ոչ կտոր մը լաթ՝ ռաքը պըլլելու. ասով անանկ չարչարուեցաւ՝ որ քանի մը օրէն վրան ջերմ եկաւ :

Խեղճ ողորմելի, ոչ իրեն ցաւակից ելող մը կար, ոչ գեղ ընող. ո՞ւր էր ան ատենները որ ծնողացը քով պզտի հիւանդութիւնը մ'ալ ունենար՝ մէկէն կը հոգային կը նայէին զինքը. հիմայ նեղութեան մէջ նեղութիւն կը գտնար : Ուրիշ գեղ չգտաւ, բայց եթէ սրալ ջրով ռաքը լուանալ. աս ալ շատ նեղութեամբ, վասն զի գաւազանի մը վրայ կըսթնած քսքրսուելով պի-

տի երթար շուր առնելու, միայն ա-
սով կը մխիթարուէր՝ որ անօթութիւն
չէր ունենար, կերակուր պատրաստե-
լէն ազատ էր. ուրիշ բան չէր մնար
իրեն բայց միայն Աստուծոյ ողորմու-
թեանը ապաւինիլ : Աստուծոյ ողոր-
մութիւնն ալ որ պատրաստ է զինքը
կանչողներուն, լսեց աղօթքին, վերքը
գոցուեցաւ, կամաց կամաց ջերմն ալ
անցաւ :

Աւշի մտածմունքը եղաւ Աստուծոյ
շնորհակալ ըլլալ, ըրած բարերարու-
թեանը համար. ու քաշել սկսելուն
պէս իրեն սիրելի ժայռին վրայ ելաւ,
ու ինկաւ խաչին ոտքը, ու հոն ե-
րախառափառութեամբ անուշ արցունք-
ներ թափեց :

Բոլորովին ընտապէն վերջը, ետեւ
եղաւ իրեն հողաթափ շինելու, որ ան-
կէ վերջը չըլլայ թէ՛ նորէն ոսարէնե-
րուն վրայէն քաշելու ատենը փորձան-
քի մը գայ : Հողաթափին տակը շինեց
նաւին փայտերէն, հին հողաթափնե-
րուն մնացած կաշիովը քամեց՝ ոտքը
անցուց : Զգեսան ալ պէտք էր հոգալ,
վասն զի հագածները մաշէր պատրու-
տեր էին. բայց ուսկից պիտի լաթը
գտնար, հօրը վերարկուէն զատ՝ ուրիշ

բան չունէր . երբ ճարը հասաւ, ան վերարկունն ձևի քերելով իրեն երկայն գգեստ մը շինեց հագաւ . ճգնաւոր մը դարձեր էր, անանկ որ ինքը ալ առջի անգամ գէմքը տեսնալով շուրջին մէջը՝ շկրցաւ ծիծաղը բռնել: Աս ալ լրմընցնելէն ետքը ուռիի կեղևէ գլխարկ մը շինեց, գուխը գրաւ . վերջը փառք տուաւ Աստուծոյ որ իրեն օգնեց, միտքը բանալով: Աս գործ քերուս հետ խելացի մտածութիւններ ալ կ'ընէր՝ որ ինչուան ան ասենը չէր անցած մտքէն . ճանչցաւ թէ ինչ օգուաներ ունի մարդկային ընկերութիւնը . մէկը գործք մը գլուխ տանելու . համար, կամ տան և խանութի հարկաւոր եղած գործիքները շինելու համար՝ քանի՞ մարդու աշխատանք պէտք է: Օրինակի համար հիմայ սա հագած զգեստին կտաւը՝ յորչափ աշխատութեամբ շինուած է. քանի՞ ձեռք հիւսեր են, քանի՞ մեքենաներէ անցեր է, որ մարդուս մտքին կարողութիւնը կը ցուցընեն . յորչափ խելք, յորչափ մտադրութիւն պէտք է որ կարենայ մարդ բան բանի յարմարցնել, ու վախճանին հասնիլ: Ան ասենը ճանչցաւ ճարտարութեան յարգը . որ կը դանայ տեսակ տեսակ ար-

հետաներ, և մարդիկ աշխատելով կ'օգնեն մէկզմէկու թէ արհեստներով թէ վաճառականութեամբ. որպէս զի ամէնքն ալ իրենց ապրուստը գտնան ու հանդիստ ապրին: Ասանկ բաներ թէ՛ փիլէն իր ծնողացը առեւը ամենեւին մտքէն չէր անցուցած. հիմայ ուրիշ աչքով կը նայէր տեսած բաներուն վրայ, ու ամէն մէկուն օգուտը, յարգը ճանչնալով, աւելի երաստագիտութեամբ մը շնորհակալ կ'ըլլար Աստուծոյ, որ մարդուս սրտին մէջ գրեթէ ամէն գիտութեանց սկզբունքը, ու կ'օգնէ որ յիշ քիչ խելուքնին բացուելով կարենան անոնցմով երջանիկ ըլլալ:



Այս գրքի համար հարկուած է 100 ֆրանկ. որոնք կ'ընդհանրուին իւրաքանչիւր հատուածի համար 50 ֆրանկով. որոնք կ'ընդհանրուին իւրաքանչիւր հատուածի համար 50 ֆրանկով. որոնք կ'ընդհանրուին իւրաքանչիւր հատուածի համար 50 ֆրանկով. որոնք կ'ընդհանրուին իւրաքանչիւր հատուածի համար 50 ֆրանկով.



Գ Լ Ո Ւ Խ Ե

Կրակ .

ԹԵՈՓԻԼԷՆ առողջանալէն վերջը ,
հազուաւոր ճարեց . ամէն օր կերակու-
րը կը գտնար , իրեն պէտք եղածէն
աւելի փայտ ունէր , հարկաւոր բանի
մը հօգ չունէր . բայց ան կզգիին մէջ
բնակիլը իրեն մեծ գժուարութիւն կը
բերէր . միայն յուսալով երբեմնոր օր մը
կը տեսնայ իր ծնողքը , ինքը զինքը կը
մխիթարէր : Շատ անգամ կ'ելլէր ժայ-
ռին գլուխը , կը նայէր չորս կողմը
արդեօք նաւ մը կ'անցնի՞ թէ չէ : Տե-
սաւ քանի մը անգամ նաւեր , բայց
չատ հեռուէն , անանկ որ անկարելի
էր նշանով մը իմացընել իրեն հօն ըլ-
լալը . տեսած ատենը սիրտը վեր վեր
կը նետէր , բայց ան նաւերուն սահե-
լուն պէս իր յոյսն ալ կը կտրէր : Ասկէ
իմացաւ որ կը վախնան աս կզգիին մօ-
տիկնալու՝ ջրլայ որ նաւերնին վա-
սուի ան ժայռերուն զարնուելով . և

այսպէս բոլոր յոյսը կը կորսընցընէր .
միայն Աստուծոյ օգնութեանը կ'սպա-
սէր : Բայց ինքը իր կողմէն ալ պարտաւ
զկենալու համար , ձմեռն ալ անցընե-
լու պատրաստութիւն տեսաւ . ժող-
վեց իրեն ուսելու պաշարը , կաղնիի
փայտ կարեց , ու մեծ դժարութեամբ
քաշկըստելով իրեն բնակարանը տա-
րաւ . սրովհետեւ հողաթափները տախ-
արկէ շինած էին՝ շատ չարչարեցին
զինքը դէպ ի վեր ժայռերու վրայ ե-
լած ասեներ . վասն զի կաշիի պէս չէ-
ին ծախր ոտքին տակը որ դիւրաւ քա-
լէ . բայց ինքը անոր վրայ ալ գոհ էր :
Պէտք եղած դործ իքներ ալ չունենա-
լուն՝ երկայն ասեն անցուց իրեն հար-
կաւոր եղած փայտերը ընտրելու ,
կարելու , տեղաւորցընելու . վերջա-
պէս շարեց լմընցաւ , երկու ժայռի
մէջ գիզեց բոլորն ալ իր բնակարանին
մօտ , չոր ճիւղերով ու խոտերով ծած-
կեց , որ թացութիւն չառնեն : Ասկէ
քանի մը օր ետքը մէկ սպէկ ձուկ մը
գրեր կը տապկէր , մէյմ' ալ միտքը ե-
կաւ որ երթայ նորէն ծովուն եղերքը
նայի թէ արդեօք ալիքները իրեն որս
մը բերեր են , ձուկ կամ ոստրէ կամ
բուստ , ինչ ըլլայ ըլլայ . կողով մը ա-

ուսւ գնաց ծովեղերքը կարծածէն աւել-
լին գաաւ, շինած աւազանին մէջ ձուկ-
ները կը ջաթկուակին՝ ոսարէները չորս
դի փուռեր էին. կարմրագոյն բուս-
տերը բաց բաց կը փայլէին. ուրախու-
թենէն մէկէն սսթթուեցաւ իջաւ
աւազանը, ժողվեց ձկները բարակ ձկի
մը անցուց. ոսարէները ու բուսան ալ
կողովին մէջ դրաւ : Ջրէն ելաւ հա-
գուեցաւ . մէյ մ'ալ գլուխը անդին
գարձուցածին պէս , իր բնակարանին
մօտէն մէկ սև մուխ մը տեսաւ և մէ-
ջէն կրակի բոցեր շիտակ դէպ ի եր-
կինք կը բարձրանար : Տէր Աստուած
ստուաց, առ ի՞նչ պիտի ըլլայ : Աս կողմ
ալ հրաբո՞ւղիս կայ եղեր . և ինչէ՞ն
պիտի ըլլայ առ թանձր մուխը ու առ
սոսկալի բոցը . երթամ տեսնեմ : Մէ-
կէն վաղեց գնաց դէպ ի կրակը . որ-
չամ որ կը մօտիկնար, վախն ալ կ'աւել-
նար : Մէյ մ'ալ տեսնայ որ իր բնակա-
րանը բանող եղևնի ծառերը կրակ կը ար-
բեր են . վախէն ու տրամուլթենէն
ոսուրները կապուեցան , հազիւ սիրա-
րբաւ ժայռէն անդին անցնելու :

Ո՛հ , ի՞նչ ցաւ , ի՞նչ յուսահատու-
թիւն . ձմեռուան համար իր գիղած
բոլոր փայտը՝ կրակը աւեր էր , ու ա-

մէն դին կը տարածէր : Իր խրճիթին
տանիքը , սեղանը , աթոռը , խոտը , ա-
մէն բան մոխիր գարձեր էին . կերա-
կուրի ու ջուրի ամանները կտարը-
տած , իր սիրելի բնակարանը որ այն-
չափ աշխատութեամբ շիներ էր՝ մէկ
կսկծալի տեսարան մը եղած էր . իր
քարէ վառարանը քակուած սեցած ,
կացինին կաթը այրած , ամէն բան կոր-
սուած փճացած էր . գետինը անանկ
տաք էր , որ Թէոփիլէն վախնալով չըլ-
լայ թէ հողաթափը այրի՝ ետ քաշուե-
ցաւ : Ճանկրուտելով ելաւ ան ժայռին
ծայրը՝ ուր որ խաչը տնկեր էր , ու
հոնկէ սկսաւ դիտել կրակին ըրած
վրասները : Ո՞վ կրնայ պատմել իրեն
սրտին նեղութիւնը , չկար անկէ վեր-
ջը մէկ ծածք մը՝ որ զինքը ցրտէն
պաշտպանէ , չկար խալկին մը՝ որուն
մէջ երկու ձուկ եփէ , չկար փարչ մը՝
որ ջուր բերէ . ի՞նչ ընէ խեղճ ողոր-
մելի աղան : Երբոր ասանկ վախցած
աշուրները կը գարձընէր իր աւրուած
չէնքին վրայ , մէկ կողմէն կապնիի ե-
ղևինի ծառերը գեռ կ'այրէին , խէժը
հալած կաթիլ կաթիլ վար կը թափէր
ու գետնին երեսը կը բռնկէր : Թէոփի-
լէն սիրար կ'եփէր , կ'ուզէր կրակը

մարեւ, բայց ի՞նչ բանով. իր ամէն ու-
նեցածը ինչուան ձուկ բռնելու չուանն
ալ ոչընչացէր էր: Ան ատենէ ձեռուը-
ները ու աչքերը վերցուցած սրտանց
կանչեց Աստուծոյ. Ո՛վ բարերար Տէր,
դու ես որ աս կզգիիս մէջ պաշտպանե-
ցիր զիս՝ աս իրեք տարիս, ամէն վրտանդ-
ներէ խալըսցուցիր. բայց հիմա հա-
սաւ գլխուս ծանր ու նոր վիշտ մը
առջիններէն մեծ: Չեմ գիտեր ի՞նչ
պիտի ըլլայ իմ կեանքս՝ աս անապատ
տեղւոյս մէջ, իմ օգտակար բաներս
կորսընցնելէս վերջը: Դու Աստուած
իմ, այնչափ նշաններով գթութիւնդ
ինձի ցուցուցէր էիր, հիմա մէկէն կ'ու-
զէս ինձմէ ետ քաշել քու շնորհքդ:
Դու որ կը հագաս թռչունները որ ըլ-
լայ թէ անօթութենէ մեռնին. մարդը
որ քու արարածներուդ մէջէն առջինն
է, որուն համար քու միածին որդիդ
մեռաւ խաչին վրայ, ան կենդանիներ-
րէն փոքր պիտի մնայ քու գթու-
թեանդ առջեւ: Չէ չէ, ո՛վ Տէր, նո-
րէն գթութեամբ նայէ իմ վրաս, ո-
րուն շատ կարօտ եմ հիմայ՝ քան ու-
րիշ ատեն: Քեզի դիւրին է գէշէն ա-
զէկը հանել. ամէն բան քու ձեռքիդ
մէջ ողորմութեան գործիք մը կը դառ-

նայ. շատ անգամ դու զմեզ կը տա-
նիս ինչուան անդունդին բերանը՝ որ
մեզի անոր խորուժիւնը ցուցընես, ու
չես թողուր որ մէջը իյնանք: Կը յու-
սամ որ աս ծանր դժբաղդուժիւնն ալ
որ գլխուս եկաւ, քու ողորմութիւնդ
յայտնելու նոր պատճառ մը պիտի ըլ-
լայ. որպէս զի ես ալ ասկէ ետեւ զքեզ
ալ աւելի օրհնեմ ու գովեմ:

Աս աղօթքէն վերջը, Թէոփիլէն, ճար
մտածեց գիշերը անցնելուն: Բոցը կա-
մաց կամաց կ'իջնար, բայց մուխը դեռ
կը ծխէր, տաքութիւնը կամաց կամաց
կը պակսէր: Տեսաւ որ ծածկուելու տեղ
մը չունի, աչքը առաւ բաց օդին տակ
պառկելու. արևը մարը մտաւ. մտա-
ծին պէս, գնաց խաչին ոտքին տակը
գլուխը դրաւ, մէկէն քունը տարաւ.
մէյ մ'ալ աչուրները բացաւ արևը ծա-
գած գտաւ: Անօթութենէն պէտք ե-
ղաւ ծովին եղերքը երթալ ոստրէ ժող-
վելու, բայց բան մը չգտաւ, վասն զի
դէր ջուրը չէր բարձրացած. սիրտը
կոտրած սկսաւ հոն պըտըտիլ, ին-
չուան որ միտքը ինկաւ իր աւազանէն
ձուկ մը հանելու՝ որ տարաւ իր այ-
րած բնակարանին կտորներուն վրայ
եփեց կերաւ ախորժելով՝ ետքը գնաց

բամառուքով՝ ժայռին վրայ գլխուն ճա-
մը մտածելու :

Անակ վախ մը եկու վրան՝ երբ
մտածեց ձեռուան ցուրտը ան բաց
տեղը, որ ուրիշ նեղութիւնները մոռ-
ցաւ : Գիտէր որ բոլոր կողիին մէջ ու-
րիշ յարմար տեղ մը չկար բնակելու
ինչպէս իր առջի տեղը, թէ ջուրին
մօտ ըլլալուն համար և թէ եղևինի
ծառերուն համար, որոնց ճիւղերուն
տակը կը կենար : Միաքը գրաւ որ ջա-
նայ նորէն հոն տեղը իրեն ծածք մը
չինէ . բայց փայտ չունենալուն, ուռիի
կեղևներով ու ծովեղերքը բուսած խո-
տերով բան մը ձեւացուց, ան ալ անհը-
նարին դժուարութեամբ . վասն զի կա-
ցինէն ի դատ ձեռքը դործիք մը չկար .
որչափ որ կը ջանար շուտ լրինացնե-
լու, չէր կրնար : Երբեմն յուսով քիչ
մը ուժ կ'առնէր արգելքներուն յաղ-
թելու, երբեմն ալ դժուարութիւննե-
րէն յաղթուած յուսահատիլ կու գար,
բայց անդադար կը խնդրէր Աստուծոյ
օգնութիւնը . և ասէն ասէն կը նայ-
էր խաչին վրայ, ու սիրտը կը բացուէր :

ԳԼՈՒԽ Զ

Թեոփիլէի ծնողքը .

ՀԻՄՆ. դառնանք մէյմը խեղճ Թեոփիլէին ծնողացը : Ասոնք զինքը շատ փրնտուէլէն վերջը մաքերնին գնելով որ մեռած է , չէին գաղբէր լալէն . Թէ պէտք մէկալ զաւկընին ալ մեծ միսթաւրութիւն էր իրենց , ու Թեոփիլէին տեղը կը լեցընէին : Ամէն անգամ որ ընկուզի ասենը կու գար , Թեոփիլէին մայրը գըլխուն եկած գժբաղդութիւնը յիշէլով կը արամէր կ'ողբար : Մէկ տարի մըն ալ երբ աս ասենը հասաւ , Փելիպպոս ըսաւ իր Անգրէասին ու Մարթային , որ վաղը ինձի հետ պիտի երթաք կղզին ընկուզ և ուռի ճիւղ քաղելու : Ասոնք ուրախութեամբ պատրաստուեցան , ու երկրորդ օրը յաջող ճամբով գնացին կղզին . ընկուզ և ուռի ճիւղեր ուրիշ տարւընէ աւելի շատ գտան , ու ժողովեցին : Աերջը նստան ծովին մօտ

կերակուրնին ուտելու համար • Աստեղն է, ըսաւ հայրերնին, որ թէ՛ փիլէին հեա իրեք տարի առաջ կերակուր կերանք • ահա աստեղն է որ իմ սիրելի աղաս յանկարծ հովէն բռնուեցաւ՝ նաւակին մէջ երբ ընկուղները կը շարէր • ան սարսափելի փոթորիկը իմ զաւակս կորսնցուց • ան սե ծոցը որ կը տեսնանք ծովուն մէջ կըլլեց իմ թէ՛ ուիլէս • աս ալիքներն են որ ան ատենը կատղած փրփրած իմ անուշիկ յոյսս աչքէս խլեցին ... Ահ, բաւական է, հայրիկ, կանչեց Մարթա սիրտը ելած արցունքը թաշկինակովը սրբելով, ալ բաւական է : Անդրէաս դուխը դարձուց՝ աչուրները անկած ցըցուցած տեղը կը նայէր • մէյ մ'ալ յանկարծ վեր ցաակեց • Նայէ՛ նայէ՛ հայր, ըսաւ, նայէ՛ սա տեղը, ծովուն մէջէն թանձր ծուխ մը կ'ելայ, ծուխէն կրակ կը ցաթկէ : Հայրը մէկէն օտք ելաւ նայեցաւ տեսաւ որ՝ ծուխը սիւնի պէս կը բարձրանար • ու երբեմն երբեմն բոցը ասդին անդին վեր կը տարածէր հովին վիշելուն յարմար : Չըլլայ թէ, ըսաւ Փիլիպպոս, նաւ մը բռնկած ըլլայ • երթանք սա պղտի բլրէն ալէկ մը

տեսնենք: Մէկտեղ վեր ելան ու տե-
սան որ վառածը նաւ չէր, հապա
կղղի մը ուսկից կ'ելլէր ծուխը. Ան-
շուշտ, ըսաւ Փիլիպպոս, կղղի մըն է
ան, բայց ես ամենեւին չէի լսած թէ հոն
կղղի կայ. դարմանք է որ մեր ձկնորսն
ալ չգիտնայ: Ո՞վ գիտէ, ըսաւ Մար-
թա՝ հաւաքելով, որ մեր Թէոփիլէն
հոն ինկած չըլլայ. Ի՞նչ երջանկու-
թիւն, ըսաւ Անդրէաս, թէ որ դեռ
ոյջ ըլլայ: Աս խօսքերէն հայրերնին
արթըննալով, Շուտ մը կ'իմանայի,
ըսաւ, երթալով հոն և տեսնալով:
Ծովը հանդարտ էր, Փիլիպպոս առանց
տընտընալու նաւակը մտաւ սղոցը
հետ. ցամաքը ելածնուն պէս վաղեցին
ասոնք, տեսածնին պատմեցին իրենց
մօրը: Մայրներնին որ վրանին կը գուռ-
գուրար, շուտ մը գնաց Թոմասին բա-
նը խմացուց, ու աղաչեց որ գայ իրենց
տունը աս բանին վրայ խօսելու Փի-
լիպպոսին հետ: Թոմաս ալ շուտ մը
ելաւ եկաւ հետը քանի մը հոգի ա-
ռած գրացիներէն, յոյս մը կը ցու-
ցնէր թէ անկարելի բան չէ որ Թէո-
փիլէն հոն ըլլայ, փոթորիկէն քշուած:
Հետը եկողները սկսան վիճաբանու-
թիւն ընել, թէ այսչափ տարի է

ան բոցը հրաբուլդիսէ մը ելած է, և վտանգաւոր է անոր մօտենալ. ոմանք ալ եղան՝ որ անհողուժեամբ, կ'ուզէ նաւ ըլլայ կ'ուզէ լեռ ըլլայ, կ'ըսէին, մեզի բոլոր աշխարհքիս ոսկին ապու ըլլաք, չենք երթար սղասիկ նաւակով մը, անանկ վախնալու ճամբորդութիւն մը ընելու: Թոմաս ալ սաք գլխով ըսաւ, գնացէք մտածեցէք, թէ որ սիրտ չէք ընել հետս գալու, ես մինակ կ'երթամ Թէոփիլէին հօրը հետ, ու կը յուսամ որ Աստուած աս ճամբորդութեանս մէջ մեզի բարի օգնական ըլլայ. վասն զի սաոր ծայրը բարեգործութիւն է, խեղճ աղու մը կեանք աղատելու յոյս կայ: Ա՛վ որ կ'ուզէ գալ, վաղը առաւօտ արևը ելածին պէս գայ, մէկ տեղ իմ մեծ նոր նաւակս մանանք երթանք. ուրախ եմ որ առջի անգամը պիտի գործածեմ իմ նաւս բարեգործութեան մը համար. ես ալ նոյն մտքին վրայ եմ ըսաւ Անարոս կարիճ մանչը, ես ալ ձեզի ընկեր կ'ըլլամ, ես ալ միշտ սիրեր եմ Թէոփիլէն, թէպէտ ան միշտ խելօք չէր կենար. ինձի պարծանք կը սեպեմ թէ որ կարենամ օգնել իր ծնողացը աս գործքով. ուստի վաղը առաւօտ ձեզի

հեռ. կու գամ. Բարի գիշեր, ըսին,
հիմայ երթանք հանգչելու, որ վաղը
ուժով թի քաշենք:

Թէոփիլէին մայրը սկսաւ ճամբու
կերակուր պատրաստել. Թոմաս՝ ես
կը հողամ ըսաւ, մնացածը. ունիմ
աղէկ հին գինի, որ մեզի ուժ կրնայ
ապ երկայն ճամբորդութեան գիմա-
նալու: Մնաք բարով. բարի գիշեր:

Երբոր ամէնքը գացին քաշուեցան,
Թէոփիլէին մայրը գնաց խաչին ոտքը
ինկաւ, ինդրեց Աստուծմէ որ օրհնէ
աս ճամբորդութիւնը, ու յոյսերնին
պարտապ չհանէ: Երկայն աղօթքէն վեր-
ջը. ինքն ալ պառկեցաւ իր զաւակը
տեսնելու յուսով: Երկրորդ օրը պայ-
ծաւ արեւը ծագեց, ծովը բոլորովին
հանդարտ էր, հովը յաջող կը վզէր,
Թոմասին նաւակը պատրաստ կեցեր
էր, իրենք ալ մէջը մտան. անոնց ե-
տեէն նայելով բարեմաղթութիւն կ'ը-
նէին բոլոր գեղացիք ոտք ելած: Ա-
նոնք ալ սիրտ աւած ուժով կը քա-
շէին ու կը մօտիկնային Փիլիպպոսի
բոչը տեսած տեղը. խել մը առաջ
մարդ չէ լսած որ ան կողմը կղզի ըլլայ.
պէտք է որ կրակը նաւէ մը ելած ըլ-
լայ: Ոմանք ալ կը հաստատէին թէ

Երթալէն վերջը տեսան ծովեզերքին
սև սև ժայռերը ու խմացան որ իրաւ-
ցընէ կզզի մըն է . անկէ ալ աւելի
բռնկելով ուժերնին չէր կըտրեր , յոյ-
սերնին կ'ուժովնար : Երբոր ալէկ մը
մօտեցան , Թումաս նայելով ջրին խո-
րուժիւնը , Հոս բարեկամներ մեծ խո-
հեմուժիւն պէտք է , ըսաւ , ծովը
ժայռերով լեցուն է , զգուշութեամբ
պէտք է սուաջ երթալ որ ժայռի մը
չզարնուինք , կամաց կամաց քաշենք :
Ու անանկ զգուշութեամբ ու դժա-
րութեամբ մօտիկնալով հասան : Փի-
լիպպոս առջինը եղաւ որ ցաթկեց
դուրս , հասար չուանով նաւակը կա-
պեցին ժայռի մը : Գեանին վրայ նայե-
լով նաւավարները սկսան գլուխնին
շարժել ու ըսել , սա ժայռոտ անա-
պատ տեղ մըն է , ու չէին կրնար հաւ-
տալ որ մարդ կարենայ հոն բնակիլ :
Քիչ մը կերակուր առին ու շիտակ կը
քալէին ծովեզերքը , չորս դին նայե-
լով . յանկարծ Պետրոս տեսաւ որ
տնկած խաչ մը կայ ծովին քով , անոր
մօտ փորած ձուկի աւազան մը : Ասկէ
մեծ յոյս և մեծ ուրախութիւն ու-
նեցան : Սկսան շուտ շուտ երթալ ան
դժուար ճամբան , ուր երբեմն պէտք

կ'ըլլար ճանկրուտելվ ելլալ ժայռերու վրայ, երբեմն փոս տեղուանք իջնալ. վերջապէս ճամբայ մը գտան խոշոր խոշոր կրանիթ քարերով ծածկած, որ զիրենք Թէոփիլէին բնակարանը հանեց: Իսկ ինքը Թէոփիլէն տրամուլթեամբ նստած խաչին տակը, կը մտածէր իր խեղճուլթիւնը. անանկ խոր ընկեր էր իր մտածմունքին մէջ, որ ամենուին եկողներուն ոտքի ձայնը չլսեց: Միայն երբոր շատ մտտեցան՝ ականջին շշնկոց մը եկաւ: Թումաս ալ նոյն ատենը տեսաւ զինքը ան երկայն զգեստներովը, ու ընկերներուն ցուշընելով ըսաւ. Նա յեցէք սա ճգնաւորը որ մտածականի նստեր է. ուրեմն մարդ կայ եղեր հոս ալ. երթանք անոր հարցընենք, կարելի է բան մը գիտէ: Աս խօսքէն արթընցաւ Թէոփիլէն, յանկարծ վախով վերցաթկեց աչքը պըտըտոց ու չորս գին... Ընչ անկարծելի տեսարան, ընչ ուրախուլթեան վայրկեան. ճանչցաւ իր հայրը, իր կնքահայրը ու Պետրոսը: Բայց ո՞վ կրնայ պատմել իր խընտուամը, իր սրտին այլայլուլթիւնը, ընչպէս թուաւ իր սիրելի հօրը գիրկը, Ա՛հ հայր, հայր իմ, կանչեց, վայ... Աւ բան չկրցաւ զրուցել, իր արցունքը

հօրը արցունքին հետ խառնուեցաւ
երկուքին լեզուն ալ բռնուեցաւ՝ զար-
մանքէն ու խնաուամէն: Աս մէկ վար-
կեան մըն է որ չպատմուիր. հայրը ու
տղան չէին կրնար մէկմէկէ բաժնուիլ,
ալ աշխարհք աչուընին բան չէր երև-
նար. ամենևին չէին մտածեր իրենց եր-
կու բարեկամներն ալ որ հոն կեցեր
զիրենք կը դիտէին: Վերջապէս Թո-
մաս չի համբերեց իր պղտի ճգնաւո-
րին մօտեցաւ՝ ուսին զարնելով ըսաւ:
է՛յ Թէոփիլէ, չէս ճանչնար կնքա-
հայրդ. չէս յիշեր Թոմասը: Թէոփի-
լէն Թողուց հայրը ընկաւ Թոմասին
գիրկը. բոլոր սրտով շնորհակալ եղաւ
որ հօրը ընկեր եղեր էր աս ճամբոր-
դութեանս. նոյնպէս Պետրոսն ալ գրը-
կեց պառաւ: Ասքը հարցուց խնայաւ
որ մայրը, եղբայրները աւ քուրերը
ողջ են, ու սկսաւ լալ:

Հիմա նայինք, ըսաւ Թոմաս, ի՞նչ
պէս ես. աղէկ մեծցեր ես ու կարիճ-
ցեր. ամենևին չէի կարծեր որ աս ան-
մարդաբնակ կղզիին մէջ կարենաս աս
հասակը հասնիլ. հիմա ըսէ՛ մեզի, ի՞նչ
պէս կրցար ապրիլ աս անապատին մէջ:
Թէոփիլէն պատմելէն առաջ տարաւ
զանոնք պղտի աղբիւրին քով՝ հոն

նստեցան քիչ մը կերակուր կերան, վասն զի ինքն սլ անօթի էր: Ի՛նչ ուրախութեամբ կերաւ Թէոփիլէն միւր ու հայր, որ տարիներէ ի վեր բերանը չէր դրած:

Վերջը սլատեց իրենց իր գլխէն անցած գացածը, փոթորիկի օրէն ինչուան սա խաղրսելուն օրը: Շատ անգամ նաւավարները կու լային, լսելով Թէոփիլէին քաշած նեղութիւնները սա աւանջնութեան մէջ. մանաւանդ երբոր լսեցին թէ ի՛նչպէս կրակը առեր էր իրեն պատրաստած փայտերը. սկսան մտածել ան վտանգները, որոնց մէջ սլիտի իշնար խեղճ տղան, թէ որ ան օրը հայրը կղզին գացած չըլլար, ուսկից որ տեսաւ կրակին բոցը: — Աս ամէն բանը Աստուած կարգադրեր է եղեր, ըսաւ Թէոփիլէն. ինքը շարժեց իմ հայրս երթալ ուսի ճիւղ կտրելուն ան օրը՝ որ ես ամէն բանէ զրկուած ու մեծ խեղճութեան մէջ ինկեր էի. և ան օրը որ ես ամենէն խեղճ օրս կը կարծէի, ան օրը ինձի վերկութեան օր եղաւ:

Իմ բարեբաղդութիւնս որ զբեղ գտայ, ըսաւ հայրը, ինձի անպատմելի ուրախութիւն եղաւ. բայց սա ու-

րախուժիւնը աւելի կը մեծնայ անուշ
մխիթարութեամբ, քանի որ զքեզ ա-
սանկ բարեպաշտ, իմաստուն, ու բո-
լորովին նոր մարդ դարձած կը տես-
նամ: Իրաւ որ ըսաւ թումաս, քու
քաշած նեղութիւններուդ համար կը
ցաւինք, բայց մէկ կողմէն ալ շնոր-
հակալ ենք Աստուծոյ, որ առ ճամ-
բով զքեզ սասանկ խելացի մարդ ըրաւ:
Միտքդ կու գայ որ օր մը քեզի զուր-
ցեցի, թէ կը վախեմ որ չըլլայ թէ
Աստուած զքեզ շակելու համար թշուա-
ւութեան ճամբուն մէջ ձգէ. ու նաև
ըսի քեզի թէ քու տեղդ եղբայրնե-
րէդ մէկը ինձի որդեգիր կ'ընեմ: Աը
տեսնա՞ս, սիրելի, որ մարդարէու-
թիւնս կատարուեցաւ. ես փառք կու
տամ Աստուծոյ, որ զքեզ իր խառու-
թեամբը դարձուց իրեն, որ զինքը
աւելի սիրես ու պատուես: Աս ա-
ւանձնութեան մէջ աշխարհքէ թողու-
ցած, մարդկային օգնութենէ զրկուած,
հիմայ կ'իմանաս մարդոց յարգը, կը
ճանչնաս անոնց ծառայութիւնը. հիմա
ադէկ կը ճանչնաս մարդկային ընկե-
րութեան օգուար քան թէ առաջ:
Քու հիւանդութիւնդ քեզի կը սոր-
վեցընէ որ մենք մէկմէկու կը կարօ-

տինք: Ար հաւտամ որ շատ հեղ մտա-
ծելով քու եղբայրներուդ ու քուրե-
րուդ հետ ըրած կռիւներդ՝ ամչցած
ըլլաս: Ինչուան հիմա պիտի ճանչցած
ըլլաս թէ երբ ան ատենը պէտք էիր
քու պակասութիւնդ խոստովանիլ ու
թողութիւն ուղել՝ չնչին բանի մը
պատճառով անոնց հետ կռիւ ընելուդ
համար, ու չես ըրած, ահա անոր հա-
մար Աստուած զքեզ պատժեց, աս
կերպով մարդկանցմէ հեռացուց, լը-
ւութեան մէջ անապատ տեղ մը
ձգեց, ուսկից էիր կրնար շարժիլ:
Բայց հիմայ մտանանք անցած գացա-
ծը, միայն մեր բարւոյն համար յիշե-
ցինք. ինչպէս որ պարտքերնիս է ա-
մէն օր զմեզ Աստուծոյ առջևը քննել
ու շտկել, և իրեն ըրած բարերարու-
թեանցը համար շնորհակալ ըլլալ:

Աերակուրէն վերջը Թէոփիլէն իր
ազատողները տարաւ իրեն առջի բը-
նակարանը, ցցուց անոնց ըրած պատ-
րաստութիւնը զինքը ցուրտէն ու
անձրևէն պաշտպանելու համար: Պատ-
մեց թէ ինչպէս մէկ հանգիստ խուց
մը շիներ էր ան ժայռերուն մէջ, ինչ-
պէս իրեն կրակը հոգացեր էր: Տա-
րաւ զիրենք ձուկներուն աւազանին,

ու զարմացուց ան գեղեցիկ ձուկնե-
րուն շատութեամբը: Արբոր ամէն բան
մէկիկ մէկիկ նայեցան տեսան՝ թէ ո-
փիլէն ծիծաղելով մը ըսաւ. Աարծէք
թէ ամէն բան տեսա՞ք, չէ, դեռ գան-
ձերս չցըցուցի: — Ի՞նչ գանձ պիտի
ըլլայ, ըսին զարմանալով. Եկէք, ըսաւ
թէ ոփիլէն, տեսէք գանձս, որով մեր
գեղին կէսը կրնամ գնել: Իրաւցնէ
ապշած մնացին երբոր անոնց ցըցուց
ժայռի մը ճեղքին մէջ վեց կողով լե-
ցուն գեղեցիկ բուստեր ու մեծ մեծ
մարդարիտներ: Ասոնք հետերնիս տա-
նելու շնորհանք, ըսաւ, վասն զի օր
մը սակի կ'արժեն: Ամէնքն ալ գովե-
ցին զինքը: Արևը մանալու վրայ էր,
օրը ի՞նչպէս անցաւ չիմացան. որով
հետև անկարելի էր ան իրիկունը ցա-
մաք երկիր հասնիլ, թո՛մաս ըսաւ որ
թէ ոփիլէին բաները ծովեղերքը տա-
նինք որ վաղը առաւօտ կանուխ եր-
թանք, որչափ կարելի է շուտ հասնինք
տունը, և ընտանիքը մխիթարենք: Պետ-
րոս ու թո՛մաս կանաւնին զարկին
մարդարիտի ու բուստի կողովները,
թէ ոփիլէն ու հայրը աւին մնացած
բաները: Բայց նայեցէք, ըսաւ պզտի
ճգնաւորը, պէտք է որ մենք մէյ մ'ալ

դառնանք աս տեղուանքին ձուկերն
ալ առնենք, որ հոս փուռ տեղը չը
կորսուին: Ար մտածեմ որ մարդա-
րիաները ու բուստերը զգուշութեամբ
խոսի վրայ պարպենք նաւակին մէկ
կողմը, ու ձուկները կողովներուն մէջ
դնենք, ծովը կախենք նաւուն քովե-
րէն. որ դեռ նոր բռնած ձուկի պէս
կարենամ ընծայ տանիլ իմ քուրե-
րուս ու եղբայրներուս: Աղէկ մտա-
ծեր ես ըսին, ու գնացին նաւակին
մէջ դրին բաները, ետքը ձուկերն ալ
բերին գուրս, բան մը չմնաց թէոփի-
լէին գործածածներէն: Բայց ամենէն
աղնիւ բանը մտացանք, ըսաւ ճգնաւոր
տղան աչուրները գարձընելով կղզին
վրայ: Ի՞նչ բան է ըսաւ հայրը: Իմ
մխիթարութեանս գործ իքը, ըսաւ, լե-
ռան վրայի խաչը ուր այնչափ քաղցր
ժամեր անցուցեր եմ, ուր այնչափ
արցունք թափելով ուժ աւեր եմ,
ուր որ սորվեր եմ իմ թշուառու-
թեամբս համբերել. ամէն բանէ առաջ
ասիկայ տանինք, բոլոր իմ կեանքիս
մէջ աչքիս առջեւը ըլլայ, միտքս ձգէ իմ
խեղճութիւնս և խոստմունքս որ ըրեր
եմ միշտ զԱստուած սիրելու:

Աս բարեպաշտ մտածմունքը, աս վա-

ուած երախտագիտութիւնը, Փիլիպպոսին սիրար շարժեց, տղուն ըսածն ըրաւ, խաչն ալ հանեցին տարին: Ամէն զարդէ թալլած կղզին նորէն իր ահագին առանձնութիւնը կը դառնար: Պետրոս ու թոմաս սկսեցին էին երթալ ծով եզերքը, թէ ուրիշէն չկրցաւ բաժնուիլ իր տեղէն ինչուան որ շտուաւ իր վերջին բարեւը: Գեաթին ընկաւ, ցցուց Աստուծոյ իր երախտագիտութիւնը անոր բարութեանցը համար: Ան վայրկենին, բոլոր իրեք տարուան մէջ անցուցած դորձքերը, ցաւալի կերպով միաքը եկան, հառաչանքը ու սրտին խըշխը շուքը բերնին խօսքերը կարեցին: Երկայն ատեն անանկ պիտի մնար, թէ որ հայրը՝ որ աս տեսնալով բարի օրինակ կ'առնէր, իրեն չխմայընէր որ ժամանակը եկաւ ընկերներուն քովը երթալու, և գիշերուան վրայ հասնիլը: Թէ ուրիշէն ոտք ելաւ, վերջի անգամ մըն ալ նայեցաւ չորս դին, ու հօրը հետ գնաց. բայց բոլոր ճամբուն մէջ խորունկ կը մտածէր, ու հօրը հարցմունքներուն գրեթէ պատասխան չէր տար: Թոմաս ու Պետրոս շատոնցուրնէ հասած աղէկ կրակ մը վառելով իրիկըւան կերակուրը պատրաստեցին, թէ ու

փիլէին ձրկներէն աւելցածները եփեցին, Թումասին գինիէն ալ խմեցին ու աղէկ գիշեր մը անցուցին, երկնքի երեսը փաշփրլած ասաղերուն ասկը:

Երկրորդ առաւօտ հազիւ թէ արևելքը լուսաւորուեցաւ, պատրաստուեցան ճամբայ ելլալու: Թէօփիլէին սիրտը նորէն ասկն ու վրայ եղաւ, երբոր ետքի անգամ տեսաւ անցամաք ժայռերը որոնց մէջ իրեք ասրիի շափ ապրեր էր: Զուլեւով աչուրները լեցուեցան արցունքով, մէկ նոր աշխահի մը մէջ մտած կը կարծէր ինքը ղինքը, քանի որ նաւակը կամաց կամաց կը հեռանար ան տեղերէն, որոնց վրայ Թէօփիլէն աչուրները տնկած կը նայէր: Երբոր աղէկ մը հեռացան կղզիէն. Թումաս ելաւ երկայն փայտ մը անկեց նաւին ճսթը, ծայրը կապեց գոյնզգոյն լաթեր, որ Թէօփիլէին մայրը աուեր էր իրեն՝ աղաչելով որ աս նշանով իրեն խմացընէ հեռուէն սղուն գանուելը:

Ծովը շատ խաղաղ ըլլալուն ամենքն ալ մէկտեղ չէին քաշեր, հապա փոխնի փոխը. անանկ որ ամենն ալ նախաձիշիկ ըրին ու սկսան ցամաքը տեսնալ: Յամաքէն ալ նաւակը տեսնուեցաւ, վերջէն Թէօփիլէի խալըսելուն նշանն

ալ երևցաւ, որուն խատուտիկ կապե-
րը հովէն երերալով օդին մէջ՝ ամէն դի-
ազատութեան աւետիս կու տային, ան
աւետիքը բոլոր գեղը լսուեցաւ, մեծ
շնկոց մը ելաւ: Թէօփիլէին մայրը,
եղբարքը ու քուրերը ու գրեթէ բոլոր
գեղին բնակիչքը, վաղեցին ծովեզեր-
քը տեսնալու ան հեռացած ճգնաւորը
ու իրեն ազատողները:

Նաւավարները սկսան ուժով թի-
զարնել, յալթող զինուորներու պէս
կը մօտենային ցամաքին. կը տեսնուէր
որ չորս հոգի կայ նաւակին մէջը. մէկ
մըն ալ հասաւ նաւակը ծովեզերքը.
Թէօփիլէն ոտքը դրաւ ցամաք երկրի
վրայ . . . Ի՛նչ երջանկութիւն, ինչ
խնամ, իր խեղճ մօրը սրտին, ուրա-
խութեամբ ու սիրով գրկած իր կա-
րօացած զաւակը չէր դադրեր լալէն ու
պադնելէն. եղբայրները քուրերը կ'ու-
զէին մէկմէկէ իլել իրենց սիրելին. գե-
ղին բնակիչները զարմացած կեցեր կը
նայէին: Շատերն ալ զինքը ասանկ լե-
ցուած մեծցած ու ան երկայն զգես-
տովը տեսնալով, հաւտալնին չէր գար
թէ Թէօփիլէն ըլլայ: Ան առջիխնամէն
զարմանքէն վերջը Թէօփիլէն խօսեցաւ
ամէն հոն եղողներուն հետ. ետքը ու-

բախու թեամբ տարին զինքը տուն • ա-
մէնքը կը ջանային զինքը տեսնելու ու
իրեն պատմութիւնը լսելու • անոր հա-
մար պէտք եղաւ որ Թէոփիլէն անէն
գուրս մեծ խնձորի ծառի մը տակ նստի,
որ ամէնքն ալ գան տեսնան զինքը ու
պատմութիւնը լսեն: Պատմութեանը
հետ բարոյական խօսքեր ալ կը խառնէր,
ու լսողներուն միտքը կը շարժէր •
պարզ սրտով յիշեց իր առջի պակա-
սութիւններն ալ • իր անհնազանդու-
թիւնը, իր կռիւները • ու ասով տղոց
աղէկ իրատ մը տուաւ, որ լռութեամբ
ուշ կը դնէին անոր խօսքերուն:
Մարդկային ընկերութեան մը, ապրե-
լու ամէն օգուտները առաջ բերաւ • ա-
նանկ ցաւով մըն ալ նկարագրեց իր ա-
ւանձնութիւնը, մարդկային օգնու-
թենէ զրկուած ըլլալը, քաշած նեղու-
թիւնները անապատին մէջ, որ լալը ե-
կաւ, լսողներն ալ լացուց: Նատ տղոց
օգտակար եղաւ աս պատմութիւնը՝
ինքզինքնին շտկելու, հեղ ու հնազանդ
ըլլալու: Ժամ մը անցեր էր որ կը խօ-
սէր, լսողներուն կ'երևար թէ և ոչ վայր-
կեան մը եղեր է, այնչափ զմայլած էին
լսելու իր պատմութիւնը: Նոյն միջո-
ցին մէջ Թումաս, Պետրոս ու Փիլիպ-

պոս նաւակը պարպեցին. մեծ խուլցին
մէջ սեղան դրին, ու ցորեկուան կե-
րակուրը պատրաստեցին: Երբոր ամէն
բան կարգի դրուեցաւ, Թոմաս իր սի-
րուն սանը պզտի ճգնաւորը հրամ-
ցուց որ մէջտեղը նստի. ինքը նստե-
ցաւ ձախ կողմը, մայրը աջ կողմը,
հայրն ալ դիմացը. ուրիշ տղաքներ և
ամէն հրաւիրուածները սեղանին բո-
լորտիքը կարգաւ շարուեցան: Ամէն
կերակուրէն համով եկաւ Թէոփիլէին՝
ճերմակ հացը, որ շատ ստեղծ է վեր-
բերանը չէր դրած, անոր համար Աս-
տուծոյ շնորհակալ ըլլալով կ'ուտէր:
Մայրը կը զարմանար տղու բարեպաշ-
տութեանը. անուշ բարքին ու քաղա-
քավարութեանը վրայ, իր սիրտը որ
սաստիկ խշխշէր էր ան երկայն ու ցա-
ւալի բաժանմանը վրայ, ալ աւելի ու-
րախացաւ՝ երբոր իր տղան ասանկ խե-
լացի դտաւ. շատ շնորհակալ եղաւ
Աստուծոյ որ աս ճամբով իր Թէոփիլէն
չտկեց: Երբոր աս պզտի հարկինքը
լինցաւ, Թէոփիլէն բերել տուաւ իր
ժողոված հարստութիւնը ան կղզին
մէջ. ու հանեց մօրը առջև մարգա-
րիտները ու բուստերը: Զարմացած
մնացին տեսնողները. դարձաւ Թոմաս

ըսաւ Փիլիպպոսին ու կնկանը, կը
տեսնա՞ք Աստուծոյ գթութիւնը, ու իր
ղարմանալի ճամբաները, ձեզմէ աւաւ
ձեր տղան, ու տարաւ անապատի մը
մէջ կրթեց. վերջը նորէն ձեզի գար-
ձուց գանձերով: Աս մարգարիտներով
ու աս բուստերով կը վճարէք պարտ-
քերնիդ որ իրեք տարուան մէջ ըրիք.
անկէ զաս մնացածներուն գինն ալ
աւելի կ'ըլլայ ձեր քսանըմէկ տարը-
ւան կողով շինելով վաստըկած ստակէն:
Ես մեր մօտ քաղաքին մէջը ճանչուորներ
ուշիմ որ ասանկ բաներ կը սիրեն,
անոնց կը ծախեմ աս մարգարիտները
աղէկ գնով, ու ձեզի կը բերեմ ստա-
կը. որ անկէ վերջը երջանկութեամբ
հանգիստ կ'ապրիք: Միայն ասով չի
լմըննար, ըսաւ Փիլիպպոս. դուն թո-
մաս մեր կնքահայրը, դու ալ ազնիւ
Պետրոս, որովհետեւ ինձի մասնակից
եղաք վտանգով երթալ ու վնասել
տղաս, հիմայ պէտք է որ մասնակից
ըլլաք մեր բարեբաղդութեանը: Ես
կ'ուզեմ իրեք մաս ընել աս ապրանքը,
առջինը բեզի թումաս, երկրորդը Պետրո-
սին ու երրորդը ինձի: Թումաս իր տաք
կերպովը, աս ի՞նչ ըսել է՝ ըսաւ, կը
կարծես որ ես աս պղտի ճամբորդու-

Թիւնը քեզի հետ շահի մը համար ը-
րի: Փառք Աստուծոյ ես բաւական ապ-
րուստ ունիմ, ես ազայ տէր մարդ չեմ,
ինքիր գլխուս իմ աշխատանքովս կրնամ
ապրիլ ինչուան վերջը. չեմ ուզեր որ
ինչի հետ ասանկ բանի վրայ խօսա-
կցուԹիւն ըլլայ, ստակ մըն ալ չեմ առ-
ներ, ես բաւական վարձք առի տես-
նալով իմ Թէոփիլէս ասանկ բարի,
խելացի ու աւաքինի: Պետրոսը առնէ
իր մասը, վասն զի ինքը կարօտուԹիւն
ունի. մնացածը քուկդ է, նայէ որ
անով պարաքերդ վճարես:

Փիլիպպոս շատ գժ աւարուԹեամբ
հաւնեցաւ Թոմասին խորհուրդին: Քա-
նի մը որ վերջը Թոմաս կառք մը
բռնեց, Փիլիպպոսին ու Պետրոսին հետ
քաղաքը դացին, ու հոն աղէկ գնով
ծախեցին մարդարիաները ու բուստը:
Քառնալէն ետքը Թէոփիլէին հայրը
հանդիսա սրտով վճարեց իր պարաքե-
րը: Պետրոս ալ առաւ իր բաժինը, ու
աղէկ բանի բերաւ: Երբոր ուրիշները
լսեցին թէ ինչ կերպով Փիլիպպոս իր
պարաքերէն խալըսեցաւ, շատ զարմա-
շան թէ անանկ կողի մը մէջ ալ ա-
սանկ գանձ կ'ըլլայ եղեր: Ափսոս որ
եւս ալ ան ճամբորդուԹիւնը չըրի, ը-

սաւ անոնցմէ մէկը որ չէին ուզած ընկեր ըլլալու Թոմասին ու Պետրոսին, նայեցէք աս խեղճ Պետրոսին, աս ճամբորդութեամբս սրչափ բան ձեռք ձգեց. տուն շինեց տեղաւորուեցաւ: Անանկ է, ըսաւ ուրիշ մը, ասիկա մէկ բազմ մըն է, որ առաջուցմէ մարդ չի կրնար գիտնալ:

Թոմաս երբոր լսեց աս երկուքին ցաւիլը շտկէ շիտակ դարձաւ ըսաւ անոնց: Ինչք չուզեցիք թշուառ հօր մը ծառայութիւն մը ընել իրեն հետ իր տղան փնտռելու հիմայ կը սրամիք որ ան ճամբորդութեան շահէն բան չընկաւ ձեռուրնիդ. ասով կը ցուցընէք որ շահասիրութիւնը աւելի վեր կը գնէք, քան ընկերսիրութիւնը. անոր համար աղէկ յարմար պատիժ գտաք անանկ գանձէ մը զրկուելով: Փիլիպպոս պարտաքէն աւելցած սարկովը բաները շտկելէն ետեւ կանգնեց մեծ խուցին մէջ ան խաչը որ Թէոփիլէն բերեր էր կղզիէն, ու միշտ պատուով ու երասխասափտութեամբ կընայէր անոր վրայ: Իր աղաքը քանի որ կը մեծնային իրեն ուրախութիւն կը պատճառէին բարի վարքովը, մանաւանդ Թէոփիլէն որ բարի օրինակ եղաւ բոլոր գեղացոց՝

ևս առաւել իր տարեկիցներուն . տա-
նը մխիթարութիւնը եղեր էր իրեն խել-
քովը ու անգագար աշխատութեամբը :
Թողուց ճգնաւորական զգեստը ու
հօրը կ'օգնէր կողով շինելու . կրնօքա-
հօրը Թոմասին գործքերուն ալ կը հաս-
նէր սիրով : Խոշոր գրերով խաչին չորս
կողմը , պատին վրայ գրեց՝ իր անապատ
կղզին հասնելու տարին , ամիսը , ու
օրը . սասնկ ալ իրեն ազատութեան
Թուականը , մէջտեղն ալ գրեց իր
հօրը , Թոմասին ու Աեարոսին անուն-
ները . անկէ վերջը տարին քանի մը
հեղ Թոմասին խորհրդովը կ'երթար
իր ճգնութեան կղզին , ժողվելու մար-
գարիտ ու բուսա : Թոմաս սա բանիս
համար իրեն նաւակ մը շինել տուաւ
ձկնորսինաւակէն մեծ . իրեն հետ կ'առ-
նէր Աեարոսը ու իր պղտի եղբայրնե-
րը : Տարին չորս անգամ կ'ընէին սս
պղտի ճամբորդութիւնը , որ միշտ ի-
րենց յաջող կ'ըլլար ու ետքը իրենց
մեծ շահու գուռ բացաւ : Միշտ եղ-
բօր պէս կը բաժնէին իրենց մէջ վաս-
տրկածնին , ամենեւին մէկ պղտի կռիւ
մըն ալ չեղաւ մէջերնին :

Թէօփիլէն միշտ իր ծնողացը կու
տար սս ճամբորդութենէն վաստրկա-

ծը, իրեն աշխատասիրութեամբը անոնց
աղէկ ասրուստ մը ճարեց, անանկ որ
տասը տարիէն վերջը Փիլիպպոս բա-
ւական հարըստցաւ ու Աստուծոյ
փառք կու տար իրեն սիրելի զաւակը
իրեն դարձընելուն ու օգտակար ընե-
լուն համար:


Իսկ իր ընտանիքը չէին գիտեր ինչ
կերպով ցուցընեն Թէոփիլէին իրենց
երախտագիտութիւնը: Բայց Թէոփի-
լէն միշտ կ'ըսէր Թէ ես իմ պարագէս
վեր բան մը չըրի, ինչի մեծ մխիթա-
րութիւն է որ գոհ էք իմ վրաս, դուք
որ ատենօք ինձմէ նեղութիւն քաշեր
էիք: Թէոփիլէն եղաւ խելացի բարե-
պաշտ մարդ մը, սիրելի ամենուն որ
ղինքը կը ճանչնային. ինչուան խոր
ծերութիւն ասրեցաւ բարի քրիստո-
նէի պէս, անանկ ալ մեռաւ:

Ճանչուորնէրուն սուգը երկայն բշեց.
բայց իր բարի օրինակը՝ ալ երկայն
պիտի ըլլայ իր վարքէն խրատուոյնե-
րուն սրտին մէջ:



457549

Յ Ա Ն Կ Գ Լ Խ Ո Յ



ԳԼ. Ա.	Ծովու ճամբորդութիւն	•	7
ԳԼ. Բ.	Փոթորիկ	• • • •	17
ԳԼ. Գ.	Անապատ կղզի	• • •	24
ԳԼ. Դ.	Նոր Ռոպէնսոն	• • •	40
ԳԼ. Ե.	Կրակ	• • • •	50
ԳԼ. Ջ.	Թէոփիլէն ծնողքը	• •	57



